

# ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقياك

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

30րդ ՏԱՐԻ, 2011, ԹԻԻ 4-6 (346-348) - VOL. XXX N° 4-6 السنة الثلاثون - العدد الرابع - السادس

## ԼԵՎԱՄ-Ի ՓԱՅԼՈՒՆ ՑԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ



# Հ. Մ. Ը. Մ.Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՈՒՐՈՒԱԳԻԾԵՐ

## **ԻՆՉՊԵՍ ԿԸ ՏԵՍՆԵՆՔ Հ.Մ.Ը.Մ.Ը 10-15 ՏԱՐԻՆ**

Հ.Մ.Ը.Մ.ը կը տեսնենք որպէս դաստիարակչական միութիւն մը, որ կը ներշնչէ երիտասարդութիւնը արդի, գրաւիչ, դաստիարակչական, զուարճալի եւ որակաւոր ծրագիրներու ընդմէջէն, որ իր առաքելութիւնը կ'իրականացնէ երիտասարդներու միասնական աշխատանքի ճամբով: Աշխատանք, որ չափահասներու զօրաւոր աջակցութիւնը կը վայելէ, որոնք իրենց կարգին յօժար են եւ կարող՝ կատարելու իրենց դաստիարակչական դերը: Մենք նաեւ կը նկատենք Հ.Մ.-Ը.Մ.ը որպէս ամենէն աւելի ներգործօն հայկական երիտասարդական միութիւնը, որ իր դրական մասնակցութիւնը կը բերէ հայ երիտասարդութեան մեծագոյն բաժնին: Մենք կը տեսնենք նիւթապէս հաստատուն միութիւն մը, տէր՝ յառաջագոյն արհեստագիտական աղբիւրներու եւ նորագոյն սարքաւորումներու, պարզ կառոյցներով, եռուն եւ ռազմավարական տեսիլքով ղեկավարութեամբ, առաջնորդուած՝ կազմակերպ վարչամեքենայով մը, որ կը տիրապետէ ազդու հաղորդակցութեանց կարողութիւններու:

## **ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԻ ԲԵՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ - ՅԱՌԱՋԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԱԶԳԻՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ, Հ.Մ.Ը.Մ.ՈՎ ՇԱՀԱԳՐԳՈՒՄԸՆԵՐՈՒՆ**

Անկախ Հայաստանի յառաջացումով ազգային աշխարհաքաղաքական կացութիւնը փոխուեցաւ: Հայաստանի Հանրապետութիւնը դարձաւ կեդրոնը եւ կիզակէտը ազգային մեր ձգտումներուն: Սփիւռքը դարձաւ աւելի խրթին, որովհետեւ ան պարտէր գուրգուրալ հայ նոր սերունդի մը, որ ունէր կրկնակի պատկանելիութիւն - ծննդավայր կամ ապրած երկիրը եւ հայկական ցեղային ծագումը:

Նոր Սփիւռքը կը բաղկանայ կարգ մը գաղութներէ, որոնք չունին որեւէ կազմակերպուած ենթակառոյց եւ կարգ մը աւելի հին գաղութներէ, որոնք ունին բաւարար վճռական զանգուած, բայց յաճախ կը տառապին իրարու հետ հաղորդակցութեան տկարութենէ եւ հայկական ենթամշակոյթներու բախումներէ: Հ.Մ.Ը.Մ. պարտի նաւարկել վերոյիշեալ բոլոր իրականութիւններուն ընդմէջէն:

Որպէս միութիւն, Հ.Մ.Ը.Մ. Սփիւռքի մէջ գործօն եղած է զրեթէ 100 տարի եւ յաջողած է երկարատեւ բարեկամութիւն հաստատել երիտասարդութեան հետ՝ սկաւտական եւ մարզական գործունէութեանց միջոցով: Սակայն, Հ.Մ.Ը.Մ.ի ձեռք բերած ամենէն կարեւոր ազգային արժէքը ցարդ եղած է երիտասարդներու պատրաստութիւնը, որոնք տէր են բարոյական

լաւ արժէքներու: Երիտասարդներ, որոնք յաջողած են իրենց անձնական կեանքերուն մէջ, որոնք միանգամայն յագեցած են հայրենասիրական արժէքներով, այնպէս մը որ անոնցմէ շատեր ստանձնած են առաջնորդող ազդեցիկ դերեր իրենց գաղութներէն ներս, հայկական թէ ոչ-հայկական միութիւններու ընդմէջէն:

Տրուած ըլլալով որ երիտասարդութիւնն է, որ հիմը պիտի ըլլայ Հայաստանի Հանրապետութեան ապագայի զօրակցութեան եւ թէ երիտասարդութիւնն է, որ պիտի ստանձնէ Սփիւռքի ղեկավարութեան սանձերը, ապա լռելեայն կը հասկցուի, թէ երիտասարդական միութիւններն են որ ապագային պիտի առաջնորդեն ազգային ռազմավարութեան ճիգերը:

Իր համատարած գրաւութեամբ եւ ապաքաղաքականացած, բայց հայրենասիրական առաքելութեամբ, Հ.Մ.Ը.Մ. լաւագոյնս կրնայ ռահվիրայի դերը ստանձնել, դաստիարակելով աւելի լայն մեծամասնութիւն մը երիտասարդութեան, անոնց մօտ մշակելով հայութեան պատկանելու հպարտանքը, եւ շատերուն ներշնչելով յանձնառու ու գործօն դերակատարութեան անհրաժեշտութիւնը, ինչ որ մեծ նըպաստ կը բերէ ազգային մեր նպատակներուն:

## **Հ.Մ.Ը.Մ. ԻՆՉ Կ'ԱՎՆԿԱԼԷ ԻՐԱՎԱՆԱՅՆԵԼ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԻՐ ԾՐԱԳԻՐՈՎ**

1. Հ.Մ.Ը.Մ.ի հասկացողութեան բարելաւում:
2. Հաստատուն ղեկավարութեան մը ստեղծումը՝ օժտուած աւելի լաւ աղբիւրներով:
3. Ճկուն կառոյցի մը ստեղծումը, առընթեր նոր միաւորներու գաղափարին, նուազ հասուն գաղութներու մէջ:
4. Արդի տեղեկատուական արհեստագիտութեան գործածութիւն:
5. Ներգործող ծրագիրներու որդեգրում եւ ջատագովում հայերէն լեզուի գործածութեան զանազան գործունէութիւններու ընթացքին:
6. Անդամական շարքերու ընդարձակում, երիտասարդական ծրագիրի մը որդեգրում եւ մարդուժի բարելաւում:
7. Տնտեսական-նիւթական հաստատ ծրագիրի մը մշակում:
8. Շէշտաւորում առաքելութեան եւ արժէքներու վրայ հիմնուած մշակոյթի մը եւ արդիւնքի վրայ հիմնուած ծրագիրի նախատիպի մը:
9. Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ընդարձակում Հայաստանի Հանրապետութեան մէջ:  
(Հատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրի ծրագրուիւն՝ «Եզրակացութիւն- ապագայի վերաբերեալ միտքեր»)



# ԹԻԼԻՆ ՆԻԼՏԵՐԸ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 سارزليک مجلّة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



16

## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

■ Խմբագրական	2
■ Պատգամ	3
■ Անդրադարձ	5
■ Պատմություն	7
■ Ձօն	10
■ Մասնաձիղէ Մասնաձիղ	12
■ Մեր Կորուստները	35



20




29

## ՔԱԺԻՆՆԵՐ

■ Միջազգային	11
■ Մանկապատանեկան	38
■ Տարբեր Հայեացքով	40



34



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 30ԴՂ ՏԱՐԻ, 2011, ԹԻԻ 4-6 (346-348)

ԽՄԲԱԳԻՐ  
 Կիզէն Աւագեան  
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ  
 Սեդա Պէշեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Պատրիկ Կիւլպէնկեան  
 Աթօ Մոսիկեան  
 Գօգօ Սկրտիչեան  
 Վահան Համամճեան  
 Տիրան Շահինեան  
 Սալբի ճէճեան  
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Գրիգորիս Պողարեան, Նազարէք  
 Պէրպէրեան, Ներսէս Արք.  
 Բախտիկեան\*, Յարութ Շէրնէզեան,  
 Գ. Թորոյեան, Շաղիկ Գէորգեան եւ  
 շրջաններու թղթակիցներ:  
 Էջադրում - Արշօ Պալեան  
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողբի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

## ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ծշդուած է 35000 Լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ԷՆՏՐՈՒՄ

# ՆԵՏՈՒՎԾ ՁԵՌՆՈՑԸ

**Ա** կներե աշխուժութեան մէջ է Զ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի շրջանը: Ֆութպոլի դաշտի եւ դպրոցի բացումը, ԼԵՎԱՍ-ի մարզախաղերու մեծ յաջողութիւնը, Ֆութպոլի երկրորդական խումբերու ախոյեանութիւնը, Մայիսեան փառատօնը, վեթերան Ֆութպոլիստներու նուիրուած ձեռնարկը երեւելի ցուցանիշներ են շրջանին ապրած ըզգալի զարթօնքին:

Տակաւին, տեղի հասկնալի պատճառներով, «Մարզիկ»ի յաջորդ թիւին վերապահուած են շրջանին կարգ մը այլ յաջողութիւններուն արձագանգները, որոնք այլապէս ողջունելի են, ինչպէս՝ համահայկական խաղերու աննախընթաց ու մեծաթիւ մասնակցութիւն, խաղերու նախապատրաստութեան յատուկ ճաշկերոյթի կազմակերպում, պասքէպոլի տղոց խումբի վերակազմակերպում՝ սերպ հանրածանօթ մարզիչի մը հրսկողութեամբ, «Արարատեան» կարգի յուշամետալներու տուչութիւն՝ վաստակաշատ խմբապետ-խմբապետուհիներու, մասնաճիւղերու սկաուտական տարեշրջաններու փակման հանդիսութիւններ, տարեկան բանակումներ եւ այլն:

Ամէնէն ուշագրաւը, անկասկած, ԼԵՎԱՍ-ի մարզախաղերն ու Ֆութպոլի երկրորդական խումբերու ախոյեանութիւններն են, որոնք անցնող վեց ամիսներուն, Զ.Ս.Ը.Ս.ի մարզադաշտերուն մէջ համախմբեցին շուրջ 1800 պատանի տղաք ու աղջիկներ, պահ մը զանոնք հեռու պահելով յոռի բարքերէ, օտար ու այլասերիչ ազդեցութիւններէ: 1200 աշակերտներ եւ 600 կրտսեր Ֆութպոլիստներ յաղթել-պարտուելէ առաջ, ծանօթացան իրարու, ծանօթացան Զ.Ս.Ը.Ս.ին եւ այն բոլոր արժէքներուն, որոնք բնորոշ կը դարձնեն Զ.Ս.Ը.Ս.ական մրցակցութեան ազնիւ սկզբունքները: Անոնց հետ, դասընկեր-բարեկամներու եւ ծնողներու ստուար թիւ մը հետեւեցաւ մը ըրցումներուն, քաջալերեց զանոնք եւ ծափահարեց Զ.Ս.Ը.Ս.ին՝ իր նշանակալից իրագործումին համար:

Ուշագրաւ երկրորդ երեւոյթը յիշեալ

ձեռնարկները կազմակերպող «կամաւոր բանակ»ն է, բաղկացած միութենական միջին եւ երիտասարդ սերունդի նոր դէմքերէ, որոնք մեծերու շուքին տակ, առաւելագոյնը զոհեցին իրենց ժամանակէն ու հանգիստէն՝ յաջողցնելու համար յիշեալ ձեռնարկները: Գործը միացուց բոլորը եւ բոլորը միասնաբար՝ նպաստեցին գործին յաջողութեան, Զ.Ս.Ը.Ս.ի վերելքին եւ նորահաս սերունդներու կազմաւորման, բարոյական առողջ միջավայրի եւ ազգային կենարար մթնոլորտի մէջ:

Լիբանանի յետ-պատերազմեան շրջանի ամէնէն կենսունակ հանգրուանն է այս, ուր հեռակայ ծրագիրներու մշակումով իսկապէս լուրջ քայլեր կ'առնուին Զ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի ընտանիքին ապագային հաշուոյն: Գնահատելի՝ քայլեր, որոնք սակայն պակասաւոր կը մնան, եթէ չամբողջանան լրացուցիչ այլ քայլերով:

Այսպէս, ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել, որ տարբեր մարզախաղերու ճամբով Զ.Ս.Ը.Ս.ի շուրջ համախմբուած 1800 պատանիները, խաղերու ընթացիկ խանդավառութենէն ետք, մնան Զ.Ս.Ը.Ս.ի երդիքին տակ, դաստիարակչական յատուկ ծրագիրներով ծանօթանան անոր վեհ նպատակին եւ ներգրաւուին անոր սերնդակերտ աշխատանքներուն մէջ: Յուսախաբ պէտք չէ ընել դեռատի այդ տղաքը եւ մնայուն գուրգուրանքով պէտք է կարենալ պահել զանոնք միութեան մէջ կամ շուրջ:

Ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել, որպէսզի օրէ օր ծաւալող մարզական շարժումը ունենայ կազմակերպչական իր արդի վարչամեթոտան, որ համապատասխան ձեռնհասութեամբ իրականացնէ մրցաշարքեր, որոնք մէկ կողմէ ծառայեն միութենական պատասխանատու նոր մարդուժի պատրաստութեան, իսկ միւս կողմէ՝ նորահաս նոր պատանիներու ներգրաւման, յատկապէս անոնց՝ որոնք ըլլալով հանդերձ հայ, այսօր կը կրեն լիբանանեան տեղական ակումբներու շապիկները:

Այս իմաստով ձեռնոցը նետուած է արդէն:

Պէտք չէ վախճալ զայն վերցնելէ:

# ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԲԷՐՆԵՐՈՒ ԳԻՏԱԿԻՑ ԿՈՉ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳՐԻԳՈՐԻՍ ՊՈՂԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ)

**1** 918- բախտորոշ թուական մը հայ ժողովուրդի գոյատևումի պայքարին մէջ: Ազգային պատերազմ, պայքար՝ ի խնդիր ազատութեան, ի խնդիր անկախութեան ու պետականութեան: Մայիս 28- Հայաստանի Առաջին Հանրապետութեան հռչակում:

Ազատ ու անկախ հանրապետութեան հռչակման գլուխահեռ, 1918 Նոյեմբերին մարմին ու հոգի կը ստանար, թէեւ հայրենիքէն դուրս իր արմատները նետած, բայց անոր ծառայելու համար ստեղծուած Հայ Մարմնակիր-թակահան Ընդհանուր Միութիւնը-Հ.Մ.Ը.Մ.ը:

Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութիւնը պարագայական խանդավառութիւն մը չէր, այլ կարիք էր ու պահանջ եւ, ինչո՞ւ չէ, անհրաժեշտութիւն, երբ հայրենազուրկ ու Յեղասպանութենէն ճողոպրած հայ երիտասարդութիւնը երազն ու սրացքը կ'ունենար վերակազմակերպելու իր շարքերը, նոր շունչ ու աւիչ տարլու որբանոցներու մէջ հասակ առած հայ պարմանին ու պարմանուհիին, կը հաւաքէր զանոնք մէկ դրօշի տակ, ու թէեւ անոր կող տար մարմնակիրթական բնոյթի կազմակերպութեան անուն, բայց խորքով ան հոգի ու միտք էր, ապրում ու երազանք՝ ի խնդիր հայրենիքի վերելքին ու անոր ողնայարը կազմող երիտասարդ սերունդներու առողջ դաստիարակութեան ու գաղափարական դարբնումին:

Եւ որովհետեւ, ան կոչուած էր՝

- Ըլլալ հայ ժողովուրդի երազներուն եւ իղձերուն արտայայտիչը,
- Ըլլալ հայ ժողովուրդի անկորնչելի իրաւունքներու հետապնդման ուղիին վրայ անխոնջ ջահակիրը,
- Ազգի ու հայրենիքի բարձրացումին ու վերելքին ռահվիրան,

Հ.Մ.Ը.Մ. գիտակիցօրէն իրեն նշանաբան կ'ընտրէր «Բարձրացիր-բարձրացուր»ը, իր դրօշակին կող տար անկախ Հայաստանի Հանրապետութեան դրօշին գոյները ու իր նշանակին վրայ հաւատարմօրէն կը պահէր՝ թէեւ ալեհեր, բայց յաւերժական Արարատը:

Սփիւռքի մէջ, օտար երդիքներու տակ հասակ առած



PhotoRAFFI

Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտն ու մարդիկը ամբողջ 70ամեակ մը բարձր պահեց Եռագոյն դրօշը, Արարատն ու Արաքսը, տողանցեց խիտ շարքերով, ոչ միայն որպէս մարմին, այլ՝ հայու հոգի, սիրտ, միտք ու նկարագիր, որովհետեւ իւրաքանչիւր հայ պատանիի մարմնին մէջ Հ.Մ.Ը.Մ.ը ներարկեց պողպատեայ նկարագիր, զարգացած մտքի, վեհ հոգիի, տոկուն մարմնի, ազգին ու հայրենիքին ծառայութեամբ բաբախող սրտի աւիչ, ու դարձաւ՝

- Հայ ցեղի գոյութեան պատ-

ւանդան ու տեւականացման ազդակ,

- Հայ ժողովուրդի երէկի տոգորումներուն, տառապանքներուն եւ յաջողութիւններուն խորհրդանիշը,

- Հայ ժողովուրդի պահանջատիրութեան կամքը արտայայտող միութիւնը:

Ու պիտի շարունակէ ան նոյն ուղիով՝ գօտեպնդուած վաղուան յաղթանակներու հաւատքով, որպէսզի Հայկի, Սասունցի Դաւիթի, Վարդանի ու Արամ Մանուկեանի պատգամները յաւերժանան:

Այսօր, իր հիմնադրութենէն ինը տասնամեակ ետք, ըՄփիւռքի իր կառուցներու կողքին, նորանկախ Հայաստանով եւ հոն ընձիւղուած Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ով աւելի եւս հարստացած ու զօրացած, Հ.Մ.Ը.Մ. իր գոյգ գագաթներով, երիտասարդ, ուժեղ, աշխոյժ, գործի վրայ է առաւել փայլքով ու ապագայի անսահման կարելիութեամբ:

Աշխարհի բոլոր ցամաքամասներուն մէջ 93ամեայ Հ.Մ.Ը.Մ.ը իր աւելի քան 25 հազար անդամներով եւ 101 մասնաճիւղերով փարած կը մնայ իր գաղափարախօսութեան, տեսլականին եւ ազգակերտ ու ազգօգուտ գործելաձեւին: Այսօր թուրքին եթաղանն ու անոր առթած արհաւիրքը պատմութիւն դարձած են, սակայն պատմութիւն, որ Հ.Մ.Ը.Մ.ի եւ ազգային այլ կազմակերպութիւններու ջանքերով կը մնայ ապրող իրականութիւն, կեանքը իմաստաւորող եւ ներկայ ու ապագայ ուղղութիւններ կողմնորոշող ոյժ: Ըլլալով հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ, չենք բաւարարուիր դիտողի կրաւորական դիրքին մէջ մնալով, մանաւանդ մտաբերելով, որ ամբողջ 70 տարիներ, երբ կային մարդիկ, որոնց համար ազ-

գային Եռագոյնին յիշատակութիւնն իսկ անհանգստութիւն կը պատճառէր, Հ.Մ.Ը.Մ.ականը ամէնուրեք եւ ամէն առիթով հպարտօրէն կը գործէր, կը տողանցէր եւ իր երգումը կու տար Եռագոյնին ներքեւ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը իր ծնունդի առաջին օրերէն սկսեալ մշակեց տալու, առատօրէն տալու, անկեղծօրէն տալու, հայօրէն տալու գործընթացը: Տալու անսակա՛րկ, տալու կանաչ դաշտերու, բլուրներու ու լեռներու բարձունքներուն. տալու յանուն ազգին, եկեղեցիին ու հայրենիքին. տալու նոյնիսկ ամէնէն թանկագինը՝ կեանքը. վկայ Լիբանանէն մինչեւ Արցախ գոհուածներու հոյրը: Տուածին փոխարէն Հ.Մ.Ը.Մ. եղաւ նաեւ խիստ պահանջող. պահանջատէր՝ յօգուտ ազգին, եկեղեցիին, Հայաստանին ու Արցախին, ինչպէս եւ՝ երկրորդ հայրենիքին: Պահանջատիրութեան հիմնական առանցքը եղած է ու կը շարունակէ ըլլալ Յեղասպանութեան ճանաչումն ու հատուցումը, զորս կը պահանջէ մարմնով արի, մտքով առողջ, հայկականութեամբ առկի նոր սերունդներու պատրաստութիւն: Ահա հիմնական մարտահրաւէրը, որուն յանդիման Հ.Մ.Ը.Մ. ոչ միայն ձեռնածալ չէ մնացած, այլ՝ Սփիւռքի տարածքին առաջիններէն է, եթէ ոչ առաջինը, որ ձեռնարկած է ռազմավարական ծը-

**Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը իր ծնունդի առաջին օրերէն սկսեալ մշակեց տալու, առատօրէն տալու, անկեղծօրէն տալու, հայօրէն տալու գործընթացը:**

րազրաւորումի մը ստեղծումին, որուն շնորհիւ ան պիտի յաջողի Ձերդ դարու մարտահրաւէրներուն դէմ շարունակել իր երթը եւ նուաճել նորանոր յաղթանակներ:

Ահա, այս երթին յառաջատարները ըլլալու կոչուած էք դո՛ւք, Հ.Մ.Ը.Մ.ի սկառտներ, մարզիկներ, չափահաս ու երէց անդամներ, ինչպէս նաեւ հաւատաւոր համակիրներ:

Արդարեւ, Մայիսեան իւրաքանչիւր փառասուն հպարտութեան զգացումի

կողքին նոր խոյանքներու, նոր մարտահրաւէրներու գիտակից կոչն է բոլորիս: Սփիւռքի թէ՛ հայրենիքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն, իտէպններուն ու երազներուն հաւատացող բազմահազար հայօրդիներ այսօր կը տողանցեն «Մի՛շտ պատրաստ» կանչով ու Եռագոյն դրօշակը Արարատի ձիւնածածկ գագաթին կոթողելու երգումով:

- Փա՛նք ու պարծանք Հ.Մ.Ը.Մ.ի փառահեղ անցեալին:
- Փա՛նք ու պարծանք Հ.Մ.Ը.Մ.ի կենսաբոլոր ներկային:
- Փա՛նք ու պարծանք Հ.Մ.Ը.Մ.ի լուսաշող ապագային:
- Ապրի՛ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը:
- Ապրի՛ Հ.Մ.Ը.Մ.ի հաւատացող ողջ հայութիւնը:
- Ապրի՛ Ազատ, Անկախ, Միացեալ եւ Ամբողջական Հայաստանի իրականացման հաւատքն ու պայքարը:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

**HOTEL**

★ ★ ★

**PAVILLON MONCEAU**

PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com

# ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԵՒ ԱՐԺԵԶԱՓԵՐՈՒ ՎԵՐԱԹ-ԱՐՄԱՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ (Հ.Մ.Ը.Մ.Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐՇՆՉՈՒՄՈՎ)

## Նազարեթ Պերպերեան ԱԹԵՆՔ



Մանօթ հրապարակագիր Սիւզան Սարտալեան վերջերս քննական լուսարձակի տակ առած էր «Դրամը կը խօսի» երեւոյթը՝ ահագանգ հնչեցնելով, որ ժողովրդավարութեան, արդարութեան եւ մաքուր ձեռքերով կառավարման օրինակով գաղափարական-քաղաքական հիմնական արժէքներու նկատմամբ մտահոգիչ անտարբերութիւն մը սկսած է արմատաւորուիլ մերօրեայ երիտասարդութեան մօտ:

Նիւթական օգուտի կամ անձնական շահի ապահովման սիրոյն գաղափարական արժէքներու վրայէն դիտ քաշելու եւ մինչեւ իսկ բռնատէչներ հանդուրժելու կամ նախընտրելու հիւանդութիւնը վարակիչ դարձած է ոչ միայն ընդհանրապէս երկրագունդի չորս ծագերուն եւ Երրորդ Աշխարհի տարածքին, այլեւ նոյնիսկ Շուէտի նման յառաջադէմ ու հասարակական շեշտակի գարգացում ապրած երկիրներու մէջ:

Համաճարակի տարողութիւն ստացող ընկերային այս որոմէն բնականաբար գերծ չեն նաեւ Հայաստանն ու հայ երիտասարդութիւնը: Հայաստանի վերանկախացումէն քսան տարի ետք, փաստօրէն, սուր կերպով օրակարգի վրայ դրուած է, այսօր, մեր ժողովուրդին քուէն արժեցնելու եւ ժողովրդավարական մշակոյթը արմատաւորելու հրամայականը՝ յառաջիկայ խորհրդարանական ու նախագահական ընտրութեանց առ ի նախապատրաստութիւն շեշտելով կարեւորութիւնը քաղաքացիական համապատասխան շարժումի կազմակերպման ու ծաւալումին:

Կառավարման համակարգի փոսծութեան դէմ այսօրինակ ձեռնթափութիւնը եւ, ընդհանրապէս, քաղաքական ու հասարակական արժէքներու առումով ապագաղափարականացումը ախտանշական դրսեւորումներն են ինչպէս համաշխարհային, այնպէս եւ ներազգային մակարդակներու վրայ մեր ապրած

հիմնական արժէքներու եւ արժեքափերու փոփոխութեանց ժամանակաշրջանին:

Բայց ակնբախ է, որ միայն բացասական չեն մեր ապրած դարաշրջանին բերած փոփոխութիւնները: Նոյնքան հիմնական արժէքներ ու արժեքափեր նաեւ դրականօրէն զարգացում կ'ապրին:

Նոյնինքն ապագաղափարականացման կամ ապայեղափոխականացման հակումները, որոնք անցեալին բաղդատած շեշտուած կը թուին ըլլալ նորօրեայ երիտասարդութեան, ինչու չէ նաեւ ընդհանրապէս հասարակութեանց մօտ, իրենց խորքին ունին եւ կը դրսեւորեն նաեւ դրական փոփոխութիւններ: Ինչպէս աշխարհի տարածքին քիչ մը ամէն տեղ, այնպէս եւ հայ իրականութեան մէջ նոր սերունդը, նման հակումներ դրսեւորելով, անոնց ընդմէջէն նաեւ արմատական հիասթափութիւն մը ի'ր ձեւով կ'արտայայտէ, երբ գաղափարախօսութիւնները եւ յեղափոխական հոսանքները կ'արժեւորէ զանոնք կրող շարժումներու եւ կուսակցութիւններու իրական ընթացքը քննելով ու անսկզբունք նկատելով, սեփական արժէքներէն նահանջելու անոնց պատեհապաշտութիւնը տեսնելով ու կտրականապէս մերժելով:

Այլ խօսքով, երբ հաւաքական ու ազգային արժէքներէ, ժողովրդավարութենէ եւ հաւասարութենէ, ազատութենէ ու արդարութենէ ճառող գաղափարական հոսանքներ, պետական համակարգեր կամ քաղաքական ուժեր չեն յարգեր ինքնահաւատարմութեան պայմանը, հետեւանքը բնականաբար կ'ըլլայ հասարակութեանց ապրած արմատական հիասթափութիւնը թէ՛ անոնց ներկայացուցչական կառոյցներուն, թէ՛ առաջադրած գաղափարներուն նկատմամբ:

Պէտք չկայ ետ երթալու մինչեւ խորհրդային ամբողջատիրութեան օրինակը՝ հաստատելու համար, որ Ստալիններն ու Պրեժնեկները փաստօրէն իրենց անձին ու շրջապատին «սեփականաշնորհեցին» մարդկութեան ծանօթ ամէնէն համայնապաշտ գաղափարախօսութիւնը, զայն մարմնաւորելու կոչուած պետական համակարգը նախ բարոյական եւ, ապա, քաղաքական սնանկութեան դատապարտելով:

Եկած է ժամանակը հայ ազգային արժեքային համակարգի վերաթարմացման՝ նորովի վերասահմանումին ու վերահաստատումին, որպէսզի այդ հիման վրայ ազգովին կարեւանք բիրեղացնել համահայկական այն մեծ ռազմավարութիւնը, որ պիտի առաջնորդէ բոլորիս քայլերը դէպի համազգային մեր ինքնահաստատումը 21րդ դարուն:

Կը բաւէ պարզապէս աչքի առջեւ բե-  
րել մերօրեայ օրինակը արեւմտեան ժո-  
ղովրդավարութեան աջակողմեան թէ  
ձախակողմեան այն կուսակցութիւննե-  
րուն, որոնք մինչեւ իշխանութեան դե-  
կին հասնիլը երդուեալ պահակները  
կը ներկայանան արժէքային յուսատու  
համակարգերու, բայց որոնք իշխանու-  
թեան հասնելէ ետք կը վերածուին անհա-  
տական եւ խմբիշխանական չարաչա-  
հումներու անսկզբունք, պատեհապաշտ  
ու ապաբարոյական բոյներու...

Եւ կը սպասեն սեփական ժողովուր-  
դէն, մանաւանդ երիտասարդութենէն,  
որ հաւատք ընծայէ իրենց գաղափարնե-  
րուն ու... իշխանութեան:

Ընդհանուր այս խորապատկերով ընկալուած՝ հիմնական  
արժէքներու եւ արժեքափերու մերօրեայ փոփոխութիւնները  
կու գան շեշտելու համապատասխան՝ ռազմավարական  
առաջադրանքով վերանայումներու եւ ծրագրումներու հրա-  
մայականը:

Ռազմավարական՝ որովհետեւ խօսքը կը վերաբերի հիմ-  
նական արժէքներու եւ արժեքափերու ոչ այնքան նորերով  
փոխարինման, որքան նոր սերունդներու մտքին ու հոգիին  
մէջ վերաթարմացման ու նորովի արմատաւորման, մանա-  
ւանդ՝ հաւատքի վերահաստատման, որոնց ուղղութեամբ շօ-  
չափելի գործի եւ վարակիչ օրինակի երկարաշունչ ծրագիր,  
համապատասխան կառոյց եւ հետեւողական գործադրու-  
թիւն անհրաժեշտ են:

Կեդրոնանալով հայ իրականութեան վրայ, մեր առջեւ  
կը բացուի ամբողջ հորիզոնը վերասահմանում եւ գործքով  
վերահաստատում պահանջող հայ ազգային արժէքային հա-  
մակարգին:

- Հայաստանի անկախութիւնն ու ազգային պետականու-  
թիւնը անփոխարինելի արժէքներ են, բայց տարբեր էր՝ երա-  
զային էր անոնց ընկալումը անկախ եւ ազատ պետականու-  
թիւն պահանջող սերունդներուն մօտ, եւ հիմնովին տարբեր՝  
իրական ու շօչափելի խնդիրներու լուծումը պահանջող եւ,  
Անկախութեան մէջ ու Ազգային Պետականութեամբ ապրող  
սերունդներուն համար:

- Հայ մշակոյթն ու գրականութիւնը նոյնպէս անփոխա-  
րինելի արժէքներ են, որոնք համեմատաբար ինքնամփոփ եւ  
փակ շրջանակներու մէջ ապրող սերունդներուն համար  
կը ներկայանային իբրեւ ինքնապահպանման ամբողջն ամ-  
բողջներ, իսկ աշխարհին բացուած եւ ամբողջական համար-  
կումի արագընթաց տեղէն բռնուած սերունդներու աչքին՝  
առաւելապէս ինքնահաստատման գէնքեր են եւ համապա-  
տասխան վերանորոգման, աշխարհին հասկնալի ու հասանե-  
լի դառնալու կարիք ունին:

- Հայախօսութիւնը, հայաստանասիրութիւնը, հայ եկե-  
ղեցւոյ եւ հայ դպրոցի փարումը, ընտանեկան աւանդապա-  
հութիւնը եւ հայ ընտանիքի պահպանումը, հայեցի ինքնա-  
կազմակերպումը նոյնքան անփոխարինելի արժէքներ են,

**Պէտք է լսել երիտա-  
սարդութիւնը եւ ունե-  
ցալ անոր կարծիքը՝ հայ  
ազգային հիմնական  
արժէքներու եւ արժեքա-  
փերու վերաթարմաց-  
ման ու վերահաստատ-  
ման ուղղութեամբ ռազ-  
մավարական մեր ծրա-  
գիրները կազմելու հա-  
մար:**

որոնք իրենց կարգին նոյնպէս տարբեր  
ընկալումներով կը ներկայանան երէկ-  
ւան եւ այսօրուան սերունդներուն: Եթէ  
երէկ հայութեան մայր հոսանքէն դուրս  
մնացողներ ու կորսուածներ էին օտա-  
րախօսն ու դաւանափոխը, օտար դպրո-  
ցէ սնանդն ու խառն ամուսնութիւն  
կնքողը, տեղական հայրենասիրութիւն  
զարգացնողն ու օտար կազմակերպու-  
թեանց յարողը, այսօր դժուար է նոյն  
ստորոգելիներով սահմանել հայութեան  
մայր հոսանքն ու... կորսուածը:

Այս բոլոր ուղղութիւններով եկած է  
ժամանակը հայ ազգային արժէքային  
համակարգի վերաթարմացման՝ նորովի  
վերասահմանումին ու վերահաստատու-

մին, որպէսզի այդ հիման վրայ ազգովին կարենանք բերե-  
ղացնել համահայկական այն մեծ ռազմավարութիւնը, որ պի-  
տի առաջնորդէ բոլորիս քայլերը դէպի համազգային մեր  
ինքնահաստատումը 21րդ դարուն:

Նոյնիսկ ուշացած ենք:

Վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութիւնը ար-  
դէն ձեռնարկած է պետական հասկացութեամբ Ռազմավա-  
րական Ծրագրի բաժին առ բաժին մշակումին, որուն կը  
պակսի, տակաւին, ժողովրդային ու ժողովրդավարական  
մասնակցութեան ներդրումը:

Նոյնպիսի ծրագրումի անհրաժեշտութիւնը զգալի է եւ  
արդէն որոշակի շարժում նկատելի է նաեւ համահայկական  
մեր կառոյցներու մակարդակին վրայ: Հ.Մ.Ը.Մ.ի մշակած  
Ռազմավարական Ծրագիրը այդ առումով քայլ մը առաջ նե-  
տելու պատրաստակամութիւն է, որ հայ իրականութեան աշ-  
խարհացրիւ ու խայտաբղէտ քարտէսին համապատասխան  
վերանորոգման կը փորձէ արժանացնել շուրջ հարիւրամեայ  
ուղի նուաճած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնական արժէքներն ու ըս-  
կզբունքները:

Հայախօս եւ օտարախօս սերունդներուն հաւասարապէս  
հասանելի ըլլալու մեծ խնդիրը պէտք է լուծել:

Կազմակերպումի աւանդական միջոցներն ու եղանակնե-  
րը արագ հաղորդակցութեան եւ անկաշկանդ իրազեկման  
այս դարուն համահունչ պէտք է գործեն:

Միութենականն ու համակիրը, ղեկավարն ու շարքայինը,  
փորձառուն եւ արհեստավարժը պէտք է գտնեն իրենց հա-  
մադրուած աշխատանքը արդիւնաւորող կազմակերպական  
կառոյցը: Անցեալին փորձուած ու արդիւնք տուած կառոյց-  
ներ նորովի քննութիւն պէտք է տան՝ նոր պայմաններու եւ  
պահանջներու ընդառաջելու իրենց ուժականութիւնը, կեն-  
սունակութիւնը եւ նպատակայարմարութիւնը վերահաստա-  
տելու համար:

Բայց մանաւանդ պէտք է լսել երիտասարդութիւնը եւ ու-  
նենալ անոր կարծիքը՝ հայ ազգային հիմնական արժէքներու  
եւ արժեքափերու վերաթարմացման ու վերահաստատման  
ուղղութեամբ ռազմավարական մեր ծրագիրները կազմելու  
համար:



# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



22 Ապրիլ 1946. միջ-մասնաճիղային 20րդ մարզախաղեր Յալէպի մէջ:

վարչութիւնը տակաւին երկու ամիս ունէր գործելու, սակայն «վարչութեան անդամներէն չորս հոգիի բացակայութեան հետեւանքով, վարչական կազմը ինքնին լուծուած կը նկատուէր: Վարչութեան անդամ Լուտեր Մասպանաճեան իր անհանգստութեան պատճառով հրաժարած էր, Սահակ Խաչատուրեան մեկնած էր Հարաւային Ամերիկա, Գառնիկ Ազիրեան Պէյրութ մեկնելու պատրաստութեան մէջ էր, նաեւ՝ Կոպեռնիկ Մանսուրեան: Այս բոլորէն ետք, ընդհանուր ժողովը վարչութիւնը լուծուած ընդունելով հանդերձ ընտրութիւնը յետաձգեց, նկատելով որ ընդհանուր ժողովի հրաւերին մէջ որեւէ ակնարկութիւն չկար նոր վարչութեան մը ընտրութեան մասին, ուստի որոշուեցաւ 23 Սեպտեմբերին կատարել այդ ընտրութիւնը» (Ատենագրութիւն 10րդ ընդհանուր ժողովի):

Յաջորդ Կիրակի, 23 Սեպտեմբերին, նոր վարչութեան անդամ կ'ընտրուին Փիլիպոս Դերձակեան, Տիգրան Յովակիմեան, Վահրամ Պայընտրեան, Անդրանիկ Արսլանեան, Լուտեր Մասպանաճեան, Բաբգէն Վահրամեան եւ Մասիս Բալուլեան:

Այս վարչութիւնը կը կազայ: 4 Նոյեմբեր 1928ին, անդամական ընդհանուր ժողով կը գումարուի նոր վարչութեան մը ընտրութեան համար: Բայց նախքան ընտրութիւնը, ժողովը, որ հրաւիրուած էր Առժամեայ Յանձնախումբի անունով, նախագահը կը հրաւիրէ այդ մարմինի ատենապետ Հելվաճեանը, որպէսզի լուսաբանէ ներկաները. «Սեպտեմբեր 23ին ընտրուած վարչութեան անդամներէն Լուտեր Մասպանաճեան իր անհանգստութեան հետեւանքով կը քաշուի, կը քաշուի նաեւ Բալուլեան: Մնացած հինգ անդամները ինքզինքնին տկար զգալով խորհրդակցական ժողովի կը հրաւիրեն անդամները, եւ լիազօրութիւն կը ստանան Առժամեայ Յանձնախումբի անունին տակ շարունակելու գործը՝ մինչեւ նոր ընտրութիւն»: Առժամեայ Յանձնախումբը իր մէկ ու կէս ամսուան գոյութեան ընթացքին ջանացեր է իր կարելիին ընել միութեան օգտին համար: Այս զեկուցումէն ետք կ'ընտրուի վարչութիւն մը, որուն մաս կը կազմեն Սուրէն Քալենտէր, Ֆերտինանտ Սահակեան, Գեղամ Ազիկլուլեան, Խորէն Հելվաճեան, Բիւզանդ Թիւֆէնկճեան, Լուտեր Մասպանաճեան եւ Միհրան Կարապետեան:

Վարչութեան աւագ նպատակը կ'ըլլայ հետապնդել դաշտին խնդիրը Քառասուն Մանկանց եկեղեցւոյ թաղականութեան հետ:

Թաղական խորհուրդը համաձայն էր դաշտը տարու տարեկան 40 ս. ոսկիով, վճարելի երեք ամսուան ընթացքին:

## Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, ԻՁ. ՄԱՍ

Տրուած զեկուցումէն կը պարզուի, որ «մինչեւ հիմա Հ.Մ.Ը.Մ-ի արձանագրուած են 353 երիտասարդ կամ պատանի, 80 հոգի քաղաքէն մեկնած, հրաժարած կամ մեռած են, 120 անդամներ ակումբ կը յաճախեն եւ անդամավճար կու տան, իսկ 153 հոգիներ ալ ո՛չ անդամավճար կու տան եւ ո՛չ ալ կը հրաժարին: Այս առթիւ առաջարկուեցաւ պատրաստել Հ.Մ.Ը.Մ-ի ներքին կանոնադիր մը, որ ի գօրու ըլլայ անդամներուն դիրքը ճշդելու»:

Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիղի վարչութիւնները կ'ընտրուէին վեց ամիսը անգամ մը, եւ թէեւ զեկուցաբեր

Հալւայի Նոր Գիւղի արծուիկներու խմբանկար:  
Կեդրոնը՝ խմբապետուհի Արշալոյս Պերպերեան (Տիւպերեան):



տելով հանդերձ մասնաճիւղիդ նիւթական դժուարութիւնները, ջերմապէս կը յանձնարարենք, որ տարեկան վարձագինի գէթ կէսը կանխիկ վճարելով թաղականութեան, մնացեալ կէսին համար վարչութեանդ յարգելի անդամներէն մին անձնապէս եւ յանուն վարչութեանդ մուրհակ մը ստորագրէ»։ Վարչութիւնը սակայն կը տնտնայ պատասխանելու թաղական խորհուրդին, որովհետեւ դաշտի տիրոջմէն վերջնական խօսք առնուած չէ։ Երրորդ դաշտի մը փոփոխութիւնը քաղաքին անմիջական շրջակայքը ապարդիւն կ'անցնի, ուստի կը ծրագրեն հակառակ պարագային Սէպտիմբեր կողմերէն դաշտ մը վարձել։

Վարչութիւնը գումարը եւ պայմանը ծանր գտնելով, կը դիմէ Քաղաքական ժողովին։ Այս դաշտին կարգադրութեան խնդիրը կենսական էր, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին տէրը, որ ձրի տրամադրած էր, հիմա ինչ որ կառավարական տուրքերու եւ այլ պատճառաբանութիւններով նեղը կը դնէր վարչութիւնը։ Ուստի, նախ հարկ էր դաշտին տէրը տեսնել ու ձգձգել, միւս կողմէ հետապնդել ազգային կալուած եղող հողամասը։ Սակայն, տակաւին Քաղաքական ժողովէն պատասխան չառած, թաղական խորհուրդը իր 5 Նոյեմբեր 1928 թուակիր նամակով կը գրէ․

«Ազգապատկան հողամասին թիւ 14 կտորը, որ տարեկան 40 սուրիական ոսկիի վարձքով միութեանդ տրամադրուած էր, կը խնդրենք որ բարի ըլլաք մինչ 24 ժամ պաշտօնական պայմանագրութեան գործողութիւնը լրացնել՝ եթէ ոչ ուրիշ պահանջողի մը տալու պիտի պարտաւորուինք»։ Հակառակ այս բոլորին, Սուրէն Քալենտէրի ղեկավարութեամբ, ողիմպիական խաղերու փորձերը կը կատարուին։

Ֆերտինանտ Սահակեան բանաւոր պատճառով վարչութեան հրաժարման պատճառով, իր տեղը կը հրաւիրուի ընդհանուր ժողովին յաջորդ առաւելագոյն քուէ առնող ձորձ Միսիրեանը, իսկ Բիւզանդ Թիւֆէկճեանի տեղ՝ Միսաք Եաւերեանը։ Ողիմպիական խաղերու փորձերուն հետ չի մոռցրւիր նաեւ Ֆուլթայոյը։ Գեղամ Ազգիւլեան Ա. խումբին կողքին կը յառաջացնէ նաեւ Բ. խումբը։

Վարչութիւնը, դաշտի խնդիրին մէջ, որպէսզի որեւէ անպատեհութեան առաջը առնէ, փնտռուած կը կատարէ քաղաքին անմիջական շրջակայքը դաշտ մը գտնելու։ Մինչ այդ կը հասնի Առաջնորդարանին նամակը․

«Ազգային կալուած ու ազգապատկան արտերը կը գրտնուին պատասխանատու մատակարարութեան տակ։ Գնահա-

Վարչութիւնը 25 Դեկտեմբերի նիստին ատենագրութեան մէջ կը գրէ, թէ «կարգ մը դժուարութիւններու առաջը առնելու եւ կանոնաւորելու համար, որոշուեցաւ 1 Յունուար 1929ին գանձել բոլոր անդամավճարները»։

«Ազգակ»ի 5 Յունուար 1929ի թիւին մէջ, «Հ.Մ.Ը.Մ.ը Լաթաքիոյ մէջ» խորագրին տակ կը կարդանք․

«Հ.Մ.Ը.Մ.ի տեղույս մասնաճիւղի գործունէութիւնը սկսած է հետաքրքրութիւն արթնցնել գաղութիս մէջ, երիտասարդութիւն եւ պատանեկութիւն իր շուրջ խմբելու վրայ է...»

«Իրաւի, Լաթաքիոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծած համակրանքը դէպի մարմնակրթանքը առաջինն է եղած, այդ համակրական հետաքրքրութիւնը ստեղծած է ոչ միայն հայերուս մէջ, այլ՝ օտարներուն, որովհետեւ նախքան Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթայոյի երկու խումբերու կազմութիւնը ո՛չ մէկ տեղացի, ո՛չ մէկ դպրոց մտածած էր իր Ֆուլթայոյի խումբը կազմել, խաղեր, մրցումներ կազմակերպել, բացի անցնող երկու տարիներուն՝ գինուորական խումբէն, որ այժմ քայքայուած է։ Այսօր, ահաւասիկ երկու խումբեր կազմուել են, իսկ երրորդ մըն ալ՝ Ֆրէյներու վարժարանին խումբը կազմուելու վրայ է։ Այս նորակազմ խումբին հետ մեր Ա. եւ Բ. խումբերը խաղացին՝ միշտ յաղթելով։ Ֆուլթայոյի խումբէն գատ, ոյժ ու տան նաեւ ողիմպիական խաղերուն․ այս մարզին մէջ եւս կարելի է գտնել յաջող մարզիկներ։

«Լաւ յաջողութիւն կարելի է նկատել Հ.Մ.Ը.Մ.ի համար, իր հիմնադրութեան տասնամեակին առթիւ կատարած հանդէսը, 24 Դեկտեմբեր 1928ին։ Կարելի է ըսել, թէ Լաթաքիոյ մէջ առաջին անգամն է որ կը ցուցադրուէին մարզական խաղեր։ Եւ ճիշդ ատոր համալ ալ մեծ հետաքրքրութիւն արթնցուցին։

«Այս հանդէսին կը նախագահէր Վահան Վրդ. Գէորգեան, իսկ բանախօսեցին Սուրէն Բաբախեան եւ Պետրոս Չպուքեան»: Իսկ Դամասկոսի մասնաճիւղը 1929ի Մոսկուայի երկրորդ օրը կը կազմակերպէ գոտտ անդամական խնճոյքերեկոյթ մը:

Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղի վարչութիւնը 1929 տարեշրջանի իր երկրորդ նիստին՝ 11 Յունուարին, «Նկատի ունենալով ախոյեանական մրցումներուն հարցը, կ'որոշուի նամակ գրել Ռընեսանսին, որպէսզի բարի ըլլան Հ.Մ.Ը.Մ-ն ալ արձանագրեն ախոյեանական մրցումներուն»:

Ռընեսանս սակայն կը մերժէ Հ.Մ.Ը.Մ-ի մասնակցութիւնը ախոյեանական մրցումներուն, «պատրուակելով վարչութեան ուշ պատասխանելը»: Այս մասին «որոշուեցաւ աւելի մօտէն հետապնդել, որպէսզի կարելի ըլլայ մասնակցիլ այս խաղերուն» (Ատենագրութիւն, 18 Յունուար 1929ի նիստին):

«Մասիս» ֆուտպոլի խումբը նամակով մը կը դիմէ «միութեանս միանալու խնդրանքով, որոշուեցաւ զիրենք դաշտ հրաւիրել եւ հարկ եղած թելադրանքը ընել»: Նախորդ տար-



ւան ընթացքին վարչութիւնը որոշած էր կազմել Հ.Մ.Ը.Մ-ի «Քնար» նուագախումբ մը: Այս ձեռնարկին պատասխանատու յանձնախումբը, երկար աշխատանքէ ետք, կը ձախողի, «վարչութիւնը գնահատելով հանդերձ յանձնախումբին թափած ջանքը «Քնար»ի կազմութեան, յետաձգեց՝ յառաջիկային ստեղծուելիք աւելի նպատատուր պայմաններուն»:

Վարչութեան 27 Փետրուար 1929ի նիստին արձանագրուած է. «Թրիփոլիէն Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղի մը կազմութեան

համար ծրագիր-կանոնագիր մը ուզուած ըլլալով, որոշուեցաւ քաջալերական նամակով մը ղրկել»:

Թրիփոլի, Պէյրուսէն ետք, Լիբանանի մարդաշատ քաղաքն էր, ուր Կիլիկիոյ պարպումէն յետոյ հոն պիտի հաստատուէր հոծ հայութիւն: Այս գաղութը շատ չանցած աւելի պիտի զարգանար. երբ հոն սկսէր գործել ԱՅ. Փի. Սի-ն, իր դռները բանալով բազմաթիւ հայ պաշտօնեաներու առջեւ: 1928ի վերջաւորութեան, այս քաղաքին մէջ, դպրոցական երկու պատանիներ՝ Միսաք Լիպարիտեան եւ Յովհաննէս Մանուկեան, Ստեփան Գարաճեանի հետ, կը ծրագրեն «Հրազ-



# Elegance Plus

Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556  
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812  
E-mail: hratch@goldenmountains.com  
hratchboy@hotmail.com

## H. N. BOYADJIAN & CO.



**Հայկաի երեք սկաուտներու խումբ մը 1946ին:  
Առաջին շարք, ձախէն աջ՝ խմբապետներ  
Յարութիւն Տերվիշեան, Յարութիւն Բարսեղեան  
եւ Եղուարդ Ճեմճեան:**

դան» անունով մարզական միութիւն մը կազմել Փութպուրի իր խումբով: Անոնք յաջորդաբար կը հրատարակեն նաեւ «Վիտոշ» եւ «Վրէժ» անուններով խմորատիպ թերթիկներ: Ահա՛ այս սղոց «Հրազդան» միութիւնն է, որ 1929ին կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնաքարը Թրիփուրի մէջ:

Պուլկարիոյ Շրջանային վարչութիւնը ծրագրած ըլլալով լոյս ընծայել «Կոթող» խորագրով հատոր մը, նուիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի տասնամեակին, Պէյրութի վարչութիւնը կը փութայ եղած դիմումին գոհացում տալ՝ հայթայթելով Սուրբիոյ եւ Լիբանանի շրջաններէն լուսանկարներ, պատրաստելով նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի այս շրջաններուն մէջ հաստատման ու զարգացման փուլերը:

Պէյրութի մասնաճիւղը, իր հերթական նիստին, 5 Մարտին, կ'որոշէ Զատիկուան մրցումներուն Հայկաի եւ Դամասկոսի առաջին խումբերը Պէյրութ հրաւիրել ու յաղթական խումբին մասնաճիւղին կողմէ բաժակ մը նուիրել:

Սկաուտական խնդրով «ըրջօրէն գբաղելու համար» կը նշանակուի յանձնախումբ մը, որուն մաս կը կազմեն Կարապետ Աւագեան, Հայկ Դաւիթեան, Արամ Քիւրտեան, Ալպէր Յակոբեան: Իսկ Զատիկուան առթիւ Հայկաին ու Դամասկոսէն գալիք հիւրերը տեղաւորելու եւ կերակրելու համար կը կազմուի մարմին մը՝ բաղկացած Յովհաննէս Շահինեանէ, Վահան Ղազէրեանէ եւ Օննիկ Պէօճէքեանէ:

Վարչական նիստին, 21 Մարտ 1929ին, օրակարգի գլխաւոր խնդիր կը հանդիսանայ Շրջանային վարչութեան հարցը: Տակաւին Հ.Մ.Ը.Մ.ի այս շրջաններուն մէջ հաստատուելու առաջին օրերուն, մտածողներ կային, գլխաւորաբար Հայկա, ունենալու կեդրոնական մարմին մը, որ ատեն մը, նոյնիսկ նիւթ դարձաւ մամուլին մէջ: Եթէ այն օրերուն կանխահաս էր, հիմա արդէն ժամանակը եկած կը նկատուի, երբ արդէն բաւական թիւով մասնաճիւղեր կը տարածուէին հսկայ տարածութիւններու վրայ եւ նորեր ալ օր ըստ օրէ աւելնալու հաւանականութիւն կար: Այս իրողութիւններու լոյսին տակ, «Շրջանային վարչութեան մը կազմութիւնը անհրաժեշտ» զգալով,



## ՀԱՅ ԱՐԻ

**Քայլեր հաստատ, ձայնաւոր,  
Կը տողանցեն լեռն ի վեր.  
Թոքերու մէջ փոթորկոտ,  
Հայերգութիւն կ'օրհներգեն:**

**Աչքերու մէջ բոցավառ,  
Եռագոյնն է յաղթական.  
Ձեռքը ձակտին անասան,  
Փառք ու պատիւ կը ցոլայ:**

**Բռունցքի մէջ խտացուած,  
Անոր կամքն է ամրակոտ.  
Ձայնը բարձր ու յստակ,  
Կը սաւառնի անդադրում:**

**Կը տողանցէ ձորերէն,  
Անտառներէ՛ն, լեռներէ՛ն...  
Կանգնած է հոն շողշողուն,  
Արեգակին տեղ կանգուն...:**

**Պարտաձանաչ կը սպասէ,  
Մեծաւորին սուլիչին.  
Զի իր ձակտին կը կրէ,  
Անուն մը մեծ՝ Հայ Արի:**

**Յարութիւն Սրկ. Եէրնէզեան  
ԴՊՐԵՎԱՆՔ ՀԱՅՈՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ  
ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ**

«որոշուեցաւ նամակներ գրել մեր բոլոր քոյր մասնաճիւղերուն, որպէսզի կիրակի, 1 Ապրիլին տեղի ունենալիք Պատգամաւորական Ժողովին ներկայացուցիչներ զրկեն»:

Զատիկուան միջ-մասնաճիւղային մրցումները մեծ հետաքրքրութեամբ կը կատարուին:

(Շար.ը էջ 37)



# ԵՒՐՈՊԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՅԵ ԱՆՈՒԹԻՒՆԸ

## Գէորգ Թորոյեան ՊԷՅՐՈՒԹ

**Ե**

ւրոպայի ֆուտպոլի ազգային խումբերու ախոյեանութեան գաղափարը յղացողը Ֆրանսացի մըն է՝ Հանրի Տելոնի, 1927ին:

Սակայն, անոր գաղափարը կարելի կ'ըլլայ իրականացնել միայն 1960ին: Առաջին մրցաշարքի գտումի մրցումներուն իրենց մասնակցութիւնը կը բերեն 17 խումբեր, որոնցմէ չորսը կը հասնի աւարտական հանգրուան, որ տեղի կ'ունենայ Ֆրանսայի մէջ: Տելոնի, հակառակ իր յառաջացած տարիքին, ակառակ կը դառնայ իր երազին իրականացման: Առաջին մրցաշարքը կը շահի այդ օրերու ԽՍՀՄ-ի խումբը, երբ պարտութեան կը մատնէ Եոզպուրտիան: Մինչեւ 1980, մրցաշարքի վերջին հանգրուանին կը մասնակցէին չորս խումբեր: 1980էն սկսեալ կ'որոգեզրուի խումբակային դրութիւնը եւ աւարտական հանգրուանին կը մասնակցին ութ խումբեր: Իսկ 1996էն սկսեալ, փոխան ութի՝ աւարտական հանգրուանին իրենց մասնակցութիւնը կը բերեն 16 խումբեր:

### ԹԻԻԵՐ ԵՒ ՏՈՒԵԱՆՆԵՐ

Յարզ կազմակերպուած են 13 մրցաշարքեր: Առաւելագոյն տիրողներուն տիրացած է Գերմանիան՝ երեք անգամ: Տիրողսակիր հանդիսացած են Գերմանիան (1972, 1980, 1996), Ֆրանսան (1984, 2000), Սպանիան (1964, 2008), Ռուսիան (1964), Իտալիան (1968), Չեխիան (1976),

Հոլանտան (1988), Դանիան (1992) եւ Յունաստանը (2004): Իսկ երեք երկիրներ՝ Եոզպուրտիա, (երկու անգամ), Պելճիքա եւ Փորթուգալ հասած են աւարտականի եւ պարտուած են:

Մրցաշարքին ամէնէն շատ մասնակցութիւն բերող երեք խումբերն են՝ Գերմանիա (10 անգամ), Ռուսիա (9 անգամ), Սպանիա եւ Հոլանտա (8 անգամ):

Երեք երկիրներ մրցաշարքը կազմակերպած են երկու անգամ. Պելճիքա (1972, 2000), Ֆրանսա (1960, 1984) եւ Իտալիա (1968, 1980):

Առաւելագոյն մրցումներ կատարող կազմերն են՝ Գերմանիա (38), Հոլանտա (32) եւ Սպանիա (30 մրցում):

Առաւելագոյն յաղթանակներ արձանագրած են Գերմանիա (19), Հոլանտա (17) եւ Ֆրանսա (14): Ամէնէն շատ կոլեր նշանակած են Գերմանիա, Հոլանտա (55 կոլ) եւ Ֆրանսա (46 կոլ): Ամէնէն շատ կոլեր ստացած են Գերմանիա (39), Դանիա (38) եւ Ռուսիա (36 կոլ): Չորս խումբեր՝ Սլովենիա, Լեհաստան, Լատվիա եւ Աւստրիա բնաւ չեն յաջողած յաղթել: Իսկ առաւելագոյն թիւով պարտութիւն կրող խումբը Դանիան է (12 պարտութիւն):

Մրցաշարքի ամէնէն շատ մասնակցութիւն բերող մարզիկներն են՝ հոլանտացի Էտտին Վան Տէր Սաար եւ Ֆրանսացի Լիլիան Թիւրամ՝ 16 անգամ:

Վեց մարզիկներ՝ Լոթար Մաթէոս, Փիթեր Շմայթլ, Արոն Ուինթրը, Էտտին Վան Տէր Սաար եւ Լիլիան Թիւրամ չորս տարբեր մրցաշարքերու բերած են իրենց մասնակցութիւնը:

Միշէլ Փլաթինի կը մնայ բոլոր ժամանակներու Եւրոպայի ֆուտպոլի

ախոյեանութիւններու լաւագոյն կողմը: 9 կոլով: Անոր կը յաջողեն Այէն Շիրըր 7 կոլով, Նուսո Կոմէզ, Թիէրի Հանրի, Փաթրիք Բլիվերթ եւ Ռուտ Վան Նիսթրըլը՝ ճական կոլով: Եօթը մարզիկներ տարբեր մրցաշարքերու ընթացքին իրագործած են հէթ-թրիքներ, իսկ Փլաթինի երկու մրցումներու ընթացքին իրագործած է հէթ-թրիք:

Վերջապէս, Եւրոպայի ֆուտպոլի ազգային խումբերու ախոյեանութեան պատմութիւնը կարելի է բաժնել երեք հանգրուանի.՝ առաջինը՝ 1960-1976, երկրորդը՝ 1980-1992, երրորդը՝ 1996էն մինչեւ այսօր: Ի դէպ, բնականաբար, ամէնէն հետաքրքրական մրցաշարքերը պիտի ըլլային երրորդ հանգրուանի մրցաշարքերը: Բայց մրցումներու մակարդակի իմաստով երեք մրցաշարքեր կը մնան յիշատակելի՝ 1988, 1992 եւ 2008:

Եւրոպայի ֆուտպոլի ախոյեանութիւնը այսօր իր մակարդակով գրեթէ չի գիշիր աշխարհի ախոյեանութեան: Կարգ մը ֆուտպոլասէրներ գայն կը նրկատեն աւելի հետաքրքրական, նկատի ունենալով որ մրցումները կը կատարւին միմիայն եւրոպական երկիրներու միջեւ, ինչ որ տաբեր «համ ու հոտ» կուտայ անոնց:

Հետաքրքրական է նաեւ այն փաստը, որ Եւրոպայի ախոյեանութեան տիրացող երկիրներուն թիւը աւելի է՝ քան աշխարհի ախոյեանութեան. երեւոյթ մը, որ գնահատելի է ու նաեւ օրինակելի՝ տիրողսի ձգտող բոլոր երկիրներու համար:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ 38ՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

## Ձարեհ Տերվիշեան ԹՈՐՈՆԹՈ

**Հ**ՄԸՄ-ի Գանատայի շրջանի 38րդ Ներկայացուցչական ժողովը տեղի ունեցավ 21-22 Մայիս 2011ին, Մոնթրեալի մէջ: Ժողովին կը մասնակցէին 36 ներկայացուցիչներ՝ Մոնթրեալի, Թորոնթոյի, Քէմպրիճի, Համիլթընի եւ

Լաւալի մասնաճիւղերէն:

Յատկանշական է, որ առաջին անգամ ըլլալով, ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքի 101րդ մասնաճիւղը՝ Լաւալը կը բերէր իր մասնակցութիւնը այս պատկառելի ժողովին:

Ընթացաւարտ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մոսիկ Թօփուզեանի բարի գալուստի խօսքէն ետք, յաջորդաբար խօսքեր արտասանեցին եւ 38րդ Ներկայացուցչական ժողովի աշխատանքներուն յաջողութիւն մաղթե-



ցին ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ եղբ. Խորէն Տիմիթեան,

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետուհի Աննա Պուլիկարեան, Ազգային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Գօգօ Գուլումճեան եւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Բիւզանդ Թորիկեան, Վարուժան Սերոբեան եւ Հրաչ Տէր Սարգիսեան:

Շաբաթ, 21 Մայիսի առաւօտեան առաջին նիստին, ժողովականները ընտրեցին ղիւանը, ատենապետներ՝ եղբայրներ Հրաչ Նաճարեան եւ Ռիչըրտ Մելքոնեան, ատենադպիրներ՝ քոյր Սոնա Լախոյեան եւ եղբ. Ճորճ Պալէոզեան: Ապա, բանաձեւի, հաշուեքննիչ, արխիւային եւ քուէախոյզ յանձնախումբերու անդամները ընտրելէ ետք, անցան օրակարգի քննարկման:

Տեղեկագրի ընթերցումէն ի յայտ եկաւ, որ ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը կազմակերպչական իր աշխատանքներու կողքին սերտ յարաբերութիւններ մշակած է ՀՄԸՄ-ի Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ



Նահանգներու Շրջանային Վարչութիւններուն հետ: Շրջանը բոլորած է սկաուտական եւ մարզական բեղուն տարեշրջան մը:

Անցեալ ամրան, Օգոստոս ամսուն, շրջանէն 71 սկաուտներ եւ արեւոյշներ մասնակցած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ ընդհանուր բանակումին, իսկ մարզական խումբերը՝ պասքեթպոլ, ֆուլթպոլ, ֆլոր հաքի, փինկ-փոնկ եւ ճատրակ, մասնակցած են Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային մրցումներուն եւ տեղական լիկերու մրցումներուն: Թորոնթոյի մասնաճիւղը ունի 81 հոգինոց մարտարուեստի իր խումբը:

Գանատայի Շրջանը այսօր կը պարզէ անդամական հետեւեալ պատկերը-ընդհանուր թիւ՝ 1709, որոնցմէ 683ը սկաուտներ եւ 708ը մարզիկներ:

Ներկայացուցչական ժողովը, այնուհետեւ, աշխատանոցներով շարունակեց իր աշխատանքները եւ սպառնիչ կերպով քննարկեց շրջանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի

10րդ Պատգամաւորական Ժողովի մարզական, սկաուտական եւ կանոնադրային օրակարգերը:

Կիրակի, 22 Մայիսի երրորդ նիստին, ժողովը ընտրեց Շրջանային Վարչութեան լրացուցիչ անդամները եւ Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական Ժողովի պատգամաւորները:

2011-2012 տարեշրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան կազմն է.- Եղբ. Լեւոն Պէնկեան՝ ատենապետ, եղբ. Տիրան Շահինեան՝ ատենադպիր, եղբ. Բաֆֆի Աբանեան՝ գանձապահ, քոյր Հելէն Նաճարեան՝ հաշուապահ, եղբայրներ Հայկ Ակոբեան, Սամսոն Քահրէճեան եւ Ժանօ Սար-



Հ.Ս.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը  
Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ  
եղբ. Արմէն Կետիկեանի հետ:

խանեան խորհրդականներ:

Հուսկ, ժողովը իր աշխատանքները աւարտեց «Յառաջ նահատակ» քայլերով: Ժողովականները իրենց շրջանները վերադարձան նոր աւիւնով, շարունակելու համար Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան ի խնդիր ծրագրուած աշխատանքները:

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF  
THE NEW AIRLINE COMPANY

Armavia  
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand / Terre vue du Ciel. Licence 075 960 031 - Studio VIKEN 1985 1985

Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS

Select  
your Journey

Guided Tours  
for 8 Days  
or 12 Days

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabetoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# ՄԱՆԹ-Ա ԳԼԱՐԱ ՀՈՎԻՏԻ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՆԻ» ՄԱՄՆԱԾԻԴԸ ԿԸ ՏՕՆԱԽՄԲԷ ԻՐ 20ԱՄԵԱԿԸ

## Մարտիկ Չանչանեան ՍԱՆՁԱ ԳԼԱՐԱ

**Հ**ՄԸՄ-ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղի հիմնադրութեան 20ամեակի տօնակատարութեան ճաշկերոյթ-պարահանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 7 Մայիսի երեկոյեան ժամը 7ին, Սանթա Գլարայի «Հայաստանի Ռեզնանս» պանդոկին մէջ, կազմակերպութեամբ՝ մասնաճիւղի վարչութեան եւ այս առիթով ստեղծուած կազմակերպիչ յանձնախումբին: Ներկայ էին աւելի քան 270 հանդիսականներ, որոնց կարգին՝ ՀՄԸՄ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ:

Օրուան հանդիսավար քոյր Անի Պաղտասարեան իր բացման խօսքով, բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ բեմ հրաւիրեց Տաթև Քահանայ Յարութիւնեանը, որպէսզի կատարէ սեղանօրհնէքի աղօթքը: Ապա, մասնաճիւղին արիւարենոյճները տողանցեցին սրահէն դէպի բեմ՝ հայկական, ամերիկեան եւ ՀՄԸՄ-ի դրօշակներով: Տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, հայկական եւ ամերիկեան քայլերգներու յոտնկայս ունկնդրութեամբ:

Քոյր Անի Պաղտասարեան խօսք առնելով ներկայացուց մասնաճիւղին պատմականը, յայտնելով որ 20 տարիներ առաջ, գաղութին մէջ խումբ մը երիտասարդներ՝ Հրայր Թաշճեան, Վահէ Պարունեան, Շահէ Աղապապեան, Ժանօ Խաչեան եւ եղբ. Ժիրայր Սարգիսեան հիմը դրին ՀՄԸՄ-ի «Անի» մասնաճիւղին, Հայ Առաքելական Ս. Անդրէաս եկեղեցոյ սրահին մէջ, գաղութին օրուան հոգեւոր հովիւ Տէր Վազգէն Քահանայ Մովսէսեանի եւ հոգաբարձութեան գործակցութեամբ:

Ապա բեմ հրաւիրուեցաւ ՀՄԸՄ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան, որ իր խօսքին մէջ գնահատելով մասնաճիւղին քսանամեայ յաղթարշաւը, շեշտեց կեդրոնացեալ եւ յարատեւ աշխատանքի անհրաժեշտութիւնը, յատկապէս մեր մատղաշ սերունդին նկատմամբ, անոնց փոխանցելու համար ազգային ինքնութեան գիտակցութիւն, հայրենասիրական ոգի եւ ազգին ծառայելու տրամադրութիւն: Այս առիթով ան բեմ հրաւիրեց մասնաճիւղի ատենապետ եղբ. Գրիգոր Գրիգորեանը եւ քաջալերանքի յուշատախտակով մը պատուեց մասնաճիւղը:

Ճաշկերոյթին ընթացքին ներկաները ըմբոշինցին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Հմուտ Չուրիակահար եղբ. Յակոբ Նազարեան ներկայացուց «Կիլիկիա» հոգեթով երգը, ապա բեմ բարձրացան «Արաքս» պարախումբի երկու պարուհիներ՝ Լեւա Տաքսեան եւ Նայիրի Գուլուսեան եւ պարուսոյց Նոյեմի Արաքսի ղեկավարութեամբ պարեցին «Գիշեր ու ցերեկ» նազպարը:

Այնուհետեւ, քոյր Անի Պաղտասարեան հրաւիրեց գաղութի Ս. Անդրէաս եկեղեցոյ հովիւ եւ առաջնորդական փոխանորդ Տէր Տաթև Քահանայ Յարութիւնեանը, որ խօսք առնելով շնորհաւորեց ՀՄԸՄ-ի «Անի» մասնաճիւղը եւ իր գնահատանքը յայտնեց այն բոլոր նուիրեալ քոյր-եղբայրներուն, որոնք իրենց անձնուէր ու անխնայ աշխատանքով կը ծառայեն միութեան վերելքի Աստուածահաճոյ գործին: Տէր Հայրը ընթերցեց Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէր-տէրեանի շնորհաւորագիրը՝ ուղղուած միութեան հիմնադրութեան 20ամեակին: Սրբազանը իր գրութեան մէջ մասնաճիւղին կը յղէր իր հայրական օրհնութիւններն ու դրուատիրքը, որպէսզի մասնաճիւղը շարունակէ մատղաշ սերունդներուն ջամբել հայեցի դաստիարակութիւն եւ հայրենասիրու-



Թիւն: Տաթեւ Քահանայ ընթերցեց նաեւ Կլենտէյլի Ս. Պետրոս եկեղեցւոյ հովիւ՝ Վազգէն Քհնյ. Մովսիսեանի եւ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւ՝ Խորէն Քհնյ. Հապէշեանի զոյգ բարեմաղթութեանց գրուած թիւնները:

Ապա, մասնաճիւղի ատենապետ եղբ. Գրիգոր Գրիգորեան խօսքը առնելով նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով է որ կ'առաջնորդուի «Անի» մասնաճիւղը: Ան յիշեց նաեւ, որ մասնաճիւղը կը շարունակէ պատրաստել առողջ եւ ազգասէր սերունդներ, ծառայելու եկեղեցւոյ, հայրենիքին, ազգին եւ մարդկութեան: Եղբ. Գրիգորեան գնահատեց այն բոլոր քոյր-եղբայրները որոնք երկար տարիներու ընթացքին տիւ ու գիշեր անվհատ գործեցին, չխնայելով իրենց ժամանակը կամ նւթաբարոյական աջակցութիւնը, առանց ընկրկելու իրենց դէմ ցցուած խոչընդոտներու դիմաց: Անոնք ընթացան անարգել կերպով, հաւատքը եւ տեսիլքը ունենալով մեր մատուցած սերունդի լուսաւոր ապագային: Եղբայրը իր խօսքը փակեց շնորհակալութիւն յայտնելով հոգեւոր հովիւներուն, հիմադիրներուն, Շրջանային Վարչութեան, բարերարներուն, 20ամեակի յանձնախումբին, ծնողներուն, վարչութեան, մասնաճիւղի յանձնախումբներուն եւ բոլոր ներկաներուն:

Եղբոր խօսքին աւարտին, բեմ բարձրացան եղբայրներ Ժիրայր Սարգիսեան, Վահէ Պարունեան, Շահիկ Աղապապեան եւ Ժանօ Խաչեան, որոնց շնորհուցան գնահատագիրներ՝ ձեռամբ մասնաճիւղի ատենապետ եղբ. Գրիգոր Գրիգորեանի:

Հրախրուեցաւ նաեւ օրուան մեծարեալ եղբ. Հրայր Թաշճեան, որուն տրուեցաւ գնահատագիր-յուշատախտակ մը, իր մասնաճիւղին մատուցած բազմամեայ եւ նուիրական ծառայութիւններուն համար: Եղբայրը յուզուածով յիշեց մասնաճիւղին հիմնադրութեան անմոռանալի պահերը եւ թուեց այն բոլոր քոյր-եղբայրները, որոնք անսակարկ նուիրաբերուածով իրենց բարոյական ներգրուած ունեցան մասնաճիւղին ծնունդին: Ապա, եղբայրը իր խօսքը ուղղելով ներկաներուն յայտնեց, թէ «Այս պատուոյ գիրը միայն իրեն չէ որ կը պատկանի, այլ՝ բոլոր անոնց որոնք իրենց անսակարկ նուիրումով զօրավիգ կանգնեցան եւ մասնակից եղան մասնաճիւղին բարգաւաճման եւ իրականացումներուն»: Քսանամեակի կարկանդակին հատումը կատարուեցաւ եղբ. Հրայր Թաշճեանի կողմէ, ներկաներու բուռն ծափահարութիւններուն հետ:

Յոտնկայ Յառաջ նահատակ»ը երգելէ ետք, ուրախութեան եւ խնճոյքի երեկոն շարունակուեցաւ եւ աւելի ջերմացաւ, երբ հնչեցին ձայնի հաղորդավար Բաֆֆիի հայրենաշունչ երգերն ու պարեզանակները:

Մինչեւ ուշ երեկոյեան ժամերը խանդավառ ու մտերմիկ մթնոլորտի մէջ, ներկաներ կը դժկամէին հրաժեշտ տալու եւ սրահէն մեկնելու:

Աւարտին, ժողովուրդը գոհունակ ժպիտով բաժնուեցաւ իրարմէ, ուրախաւիթ նման պահերու դարձեալ հանդիպելու խոստումով:

### Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՄԱՍՆԱԾԻՂ՝ ՆՈՐԹ ՀՈՒՎՈՒՏԻ ՄԷՋ

**Հ.**Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ երկարատեւ բանակցութիւններէ ետք, 26 ստորագրեալներու դիմումին ընդառաջելով, վաւերացած է Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղի մը հիմնադրութիւնը Նորթ Յուլիպոլտի մէջ:

Նորաստեղծ «Ջաւախք» մասնաճիւղը 17 Մայիս 2011ին ունեցած է իր առաջին հանդիպումը, որուն ընթացքին Շրջանային Վարչութիւնը նշանակած է եօթնամղամ վարչութիւն մը՝ պատրաստելու համար մասնաճիւղին անդրանիկ ընդհանուր ժողովը:

### ՔՈՅՐ ՄԱՐՕ ՔԷՇԻՇԵԱՆ «ՏԱՐՈՒԱՆ ԿԻՆԸ»



**25** Մարտին տեղի ունեցած հիւրասիրութեան մը ընթացքին, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան անդամ էտրմ Շիֆ, Գալիֆորնիոյ 29րդ ընտրատարածքի «Տարուան Կինը» կոչումներէն մէկը շնորհեց ՀՕՄ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան գործադիր քարտուղարուհի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անձելըսի մասնաճիւղի անդամ քոյր Մարօ Քէշիշեանի:

էտրմ Շիֆ այս առիթով յայտարարեց, որ քրոջ անխոնջ աշխատանքը նպաստած է ոչ միայն համայնքի անդամներուն, այլեւ՝ անկէ դուրս ապրողներուն, աւելցնելով, որ ան նուիրեալ մասնակից մըն է այն բոլոր ծրագիրներուն, որոնց մէջ դերակատարութիւն ստանձնած է՝ իրեն հետ բերելով աշխուժութիւն եւ խանդավառութիւն:

Քոյր Մարօ հարուստ վաստակ ունի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի եւ Մ. Նահանգներու շրջաններուն մէջ: Հայաստանի վերանկախացման շրջանին ան եղած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կարգ մը մասնաճիւղերու հիմնադիր: Երկար տարիներ ան աշխատակցած է Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարգիկ»ին:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՐԱՆԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ

## Թղթակից ՂԵՅՐՈՒԹ

**Մ**այիսեան անկախութեան ոգին, յաղթանակելու կամքը եւ ամէն հարուածէ ետք վերականգնելու վճռակատուութիւնը, Կիրակի, 29 Մայիսին թեւածեցին Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, ուր վեց հազար հայորդիներու ներկայութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքը կատարեց տարեկան իր փառատօնը՝ սկառուտական գեղարուեստական յայտագրով, մրցանակաբաշխութեամբ եւ հանդիսաւոր տղանցքով:

Փառատօնը վայելեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հովանաւորութիւնը եւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի նախագահութիւնը: Պատուոյ թրիպիւնին վրայ իրենց տեղերը գրաւած էին լիբանանահայ պետական, ազգային-կուսակցական, միութենական, կրթական եւ մարզական պատասխանատուներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան քարտուղար քոյր Մարօ Թագեան: Ան ըսաւ, որ Հայաստանի անկախութեան տօնին Հ.Մ.Ը.Մ. կենսունակութեամբ եւ հպարտութեամբ կը վերանորոգէ իր ուխտը՝ հաւատարիմ մնալու Մայիսեան յաղթանակը կերտած հերոսներու կտակին: Քոյրը զիտել տուաւ, որ երբ հայ ժողովուրդը հայկական բանակ

չունէր, Հ.Մ.Ը.Մ.ը իր տողանցքներով եւ կանոնաւոր շարքերով բանակի մը հպարտութիւնն ու կորովը կը ներշնչէր աշխարհով մէկ տարածուած հայութեան՝ գայն ամրապնդելով իր ազգային նկարագիրին մէջ:

Քոյր Թագեան շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք սատար հանդիսացան փառատօնին յաղողութեան: Ապա, ան կոչ ուղղեց նոր սե-





րունդին ամուր մնալու իր արժեքներուն մէջ՝ յարգելով պատգամը հայութեան հերոսներուն:

Բացման խօսքէն ետք, մասնաճիւղերու սկաուտական խումբեր հանդէս եկան գեղարուեստական յայտագիրով՝ տեսակաւոր պարերով ու պատկերներով Հ.Մ.Ը.Մ-ը եւ Մայիս 28ը ուրուագրծելով դաշտին վրայ:

Յաջորդեց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ ԼԵՎԱՄ-ի լաւագոյն մարզիկի բաժակի տուչութիւնը, զոր կատարեց Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վահան Համամճեան: Իր կարգին, Շրջանային



Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան Համագգայինի Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի ներկայացուցիչին յանձնեց ԼԵՎԱՄ-ի վահանը:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքին վերջին նորութիւնները եւ լուսարձակի տակ առաւ հայութեան կեանքին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի գոյութեան կարեւորութիւնը՝ իր ստեղծման օրէն մինչեւ այսօր:

«Մարտափի ու պատերազմի օրերուն ծնունդ առաւ այս միութիւնը, որ 93 տարիներ շարունակ ժամանակին հետ

քայլ պահեց եւ հայրենիքէն հագարաւոր մղոններ հեռու գտնուող զանազան երկիրներու մէջ հայրենագուրկ հայ մանուկին, պատանիին ու երիտասարդին սորվեցուց հայրենիքի սէրն ու հայ մնալու գաղտնիքը: Հ.Մ.Ը.Մ-ը երկար տարիներ գործեց հայրենիքէն դուրս, հայրենիքին համար ու եղաւ այն կրթարանը, որ սերունդներուն փոխանցեց հայավայել վճռականութիւն, աննկուն կամք եւ աննահանջ հաւատք», ըսաւ եղբ. Քէշիշեան: Ապա, ան յատուկ կերպով անդրադարձաւ ԼԵՎԱՄ-ի մրցաշարերուն եւ ֆութպոլի նորաստեղծ դպրոցին: Իր խօսքին աւարտին, եղբ. Քէշիշեան հաստատեց, որ ջահը վառ պահելով պիտի փոխանցուի նորահաս սերունդներուն,



որպեսզի ամուր պահուի անոնց հայեցի դիմագիծը եւ անոնք դառնան օրինակելի հայեր:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան իր խօսքին մէջ գնահատեց իբրեւ կարիք ու անհրաժեշտութիւն ըստեղծուած միութեան դերակատարութիւնը հայոց պատմութեան մէջ: Եղբ. Պողարեան նշեց, որ իր հիմնադրութեամբ Հ.Մ.Ը.Մ. իր հովանիին տակ առաւ որբանոցներու մէջ հասակ նետած հայ պատանիները՝ յատկապէս անոնց

փոխանցելով հոգի ու միտք, ապրում ու երազանք՝ ի խնդիր հայութեան վերելքին ու անոր ողնայարը կազմող երիտասարդ սերունդներուն առողջ դաստիարակութեան ու գաղափարական դարբնումին:

Շարունակելով, եղբ. Պողարեան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը հայ պատանիին տուաւ պոզպատեայ նկարագիր, զարգացած միտք, վեհ հոգի, տոկուն մարմին, ազգին ու հայրենիքին ծառայութեամբ բաբախող աւիշ՝ հանդիսանալով այն միութիւնը, որ Եռագոյնը բարձրացուց ամէնուրեք, երբ անոր յիշատա-

կումն անգամ անհանգստութիւն կը պատճառէր ուրիշներուն: Ապա, եղբայրը լուսարձակի տակ առաւ աշխարհի չորս ծագերուն միութեան կատարած աշխատանքը եւ ազգային գաղափարախօսութեամբ առաջնորդը լող ազգակերտ ու ազգօգուտ գործելաձեւը: Եղբ. Պողարեան յայտնեց, որ միութիւնը իր գործունէութիւնը ծաւալած է տարբեր մակարդակներու վրայ եւ տարբեր դաշտերու մէջ՝ սկզբունք ու նպատակ ունենալով ծառայել հայութեան ու հայրենիքին եւ հետապնդել անոր գերագոյն նպատակները:

Իր խօսքին աւարտին եղբ. Պողարեան յայտնեց, որ այսօր Հ.Մ.Ը.Մ-ականներու ուսերուն դրուած է պարտք՝ առաջնորդուելու «Մի՛շտ պատրաստ» նշանաբանով եւ Եռագոյնը Արարատի ձիւնածածկ գագաթին կոթողելու երդումով (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 3-4):

Խօսքերէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ Այնճարի մասնաճիւղի զոյգ շեփորախումբերուն առաջնորդութեամբ սկսաւ տողանցքը, որուն ընթացքին նկատելի էր կարգապահութիւն, խանդավառութիւն եւ յոյս, որ կ'արտացոլար յատկապէս գայլիկներուն, արծուիկներուն ու մոկլիկներուն խրոխտ քայլերուն ընդմէջէն:



Փառատօնին փակման խօսքը արտասանեց եւ հայրական իր պատգամը փոխանցեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան: Առաջնորդը անդրադարձաւ Մայիս 28ով հայոց պատմութեան էջերուն բացուած հպարտութեան էջին՝ լուսարձակի տակ առնելով Մայիսեան յաղթանակի շունչը Հ.Մ.Ը.Մ.ի ընդմէջէն փոխանցելու երեւոյթը: Ան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի թեւերուն վրայէն սաւառնելով մեր ժողովուրդը կը բարձրանայ անմահութեան կատարները՝ հայկական ոգիով, հպարտութեամբ, հասնելով ամէն բանէ վեր՝ դէպի վեհապահութիւն ու հզօրութիւն:

Առաջնորդ սրբազանը նշեց, որ Հայաստանի անկախութիւնը սխրագործութեան պատում մը չէ սոսկ, այլ՝ հոն կ'արտացոլայ հայու հոգին, որ ճակատագրական պահերուն կը շրջանցէ ամէն արգելք ու դժուարութիւն, կը ծառանայ զինք խաւարին տանելու եւ ստրկացնելու ամէն տեսակ փորձութիւններու դէմ եւ հայու պայծառութեամբ ու քաջութեամբ կը կերտէ յաղթանակներ: Ան դիտել տուաւ, որ Մայիսեան փառատօնին ճամբով Հ.Մ.Ը.Մ.ը կու գայ փաստելու, որ ինք պարզ միութիւն մը չէ, այլ՝ Մայիս 28ի ոգիին ու վճռականութեան մարմնաւորումը հանդիսացող նուիրեալ փաղանգ մը, որ կը պահէ աւանդը եւ զայն կը կտակէ հետագայ սերունդներուն:

Իր խօսքը եզրափակելով, Գեղամ Արք. Խաչերեան նշեց, որ այսօր եւս պայքար կայ բոլոր ճակատներու վրայ եւ ամէն տեղ, պայքար՝ հայկական ինքնութեան, արժէքներու, լեզուի պահպանման համար, հաստատելով, որ այդ պայքարէն կարելի է յաղթական դուրս գալ, եթէ զինուինք մեր հերոսներուն ոգիով ու պայքարը շարունակենք մեր կեանքին մէջ՝ նոյն վճռականութեամբ եւ ազգային նկարագիրին կառչած մնալով:

Մայիսեան փառատօնը աւարտեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Աւարտին, տեղի ունեցաւ հրավառութիւն:





# ԱԻԵԼԻ ՔԱՆ 1200 ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԼԵՎԱՄ-Ի 2010-2011 ՏԱՐԵՇՐԶԱՆԸ ՊԱՍԱԿՈՒԵՑԱԲ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

## Պղթակից ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ

**Հ**ինգ ամսուան միջ-դպրոցական մրցակցությունն է ետք, Մայիսին հանդիսաւոր կերպով իրենց աւարտին հասան ԼԵՎԱՄ-ի 2010-2011 տարեշրջանի խաղերը, որոնք այս տարի ընդգրկեցին փինկ-փոնկ, ճատրակ, վազք, պասքեթպոլ եւ ֆուլթպոլ:

Խաղերու փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 22 Մայիս 2011ին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայի եւ նախկին անդամներու, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներու, Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնի փոխ նախագահ Ռոպէր Ապի Ապտալլայի, Հայկազեան համալրսարանի ներկայացուցիչ դոկտ. Արտաէքմէքճիի, վարժարաններու տնօրէններու, Հայ կաթ. Հոփսիմեանց վրժ., Հայ Աւետ. Կէրթմենեան վրժ., Թէքէեան վրժ., «Թռչնոց Բոյն»:

րու, Հ.Մ.Ը.Մ-ական քոյրերու եւ եղբայրներու, մարզիչներու, ծնողներու եւ աշակերտներու:

Այս առիթով տեղի ունեցան պասքեթպոլի միջակ եւ մեծ աղջկանց աւարտական մրցումները, որոնք իրարու դէմ հանեցին Ճեմարանի, Եղիշ Մանուկեանի (միջակ աղջիկներ) եւ Ճեմարանի ու Հոփսիմեանցի (մեծ աղջիկներ) աղջկանց խումբերը:

Ապա, տեղի ունեցաւ բոլոր մարզախաղերու մրցանակակիր աշակերտներու մրցանաբաշխութիւն:

### ՓԻՆԿ-ՓՈՆԿ

Փինկ-փոնկի մրցումներուն մասնակցեցան 36 աշակերտներ եւ 15 աշակերտուհիներ 11 դպրոցներէ: Համագլխի Մեթանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան, Ազգ. Եղիշ Մանուկեան վրժ., Ազգ. Սուրէն Խանամիրեան վրժ., Ազգ. Լեւոն եւ Սոփիա Յակոբեան քոլէճ, Ազգ. Գարուստ Կիւլպէնկեան-Յառաջ վրժ., Հ.Բ.Ը.Մ-ի Յովակիմեան-Մանուկեան վրժ., Հայ կաթ. Մեսրոպեան վրժ., Հայ կաթ. Հոփսիմեանց վրժ., Հայ Աւետ. Կէրթմենեան վրժ., Թէքէեան վրժ., «Թռչնոց Բոյն»:

ման վրժ., Հայ կաթ. Հոփսիմեանց վրժ., Հայ Աւետ. Կէրթմենեան վրժ., Թէքէեան վրժ., «Թռչնոց Բոյն»:

Մրցումները կատարուեցան Հ.Մ.Ը.Մ-ի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ, տղոց ու աղջկանց չորս դասակարգերով: 1993-1994ի ծնունդներ, 1995-1996ի ծնունդներ, 1997-1998ի ծնունդներ եւ 1999ի եւ աւելի վեր ծնունդներ:

Մրցանակներ ստացան հետեւեալները:

#### 1993-1994ի ծնունդ տղաք

Ա. Միսաք Պոյաճեան (Եղիշ Մանուկեան)

Բ. Յովսէփ Պոյաճեան (Հոփսիմեանց)

Գ. Հրակ Գարազաշեան (Ճեմարան) Սարհատ Գեթսեմանեան (Ճեմարան)

#### 1993-1994ի ծնունդ աղջիկներ

Ա. Դարար Պոյաճեան (Ճեմարան)

Բ. Փաթիլ Զիլեան (Ճեմարան)

Գ. Փաթիլ Պողոսեան (Եղիշ Մանուկեան)



էլսա Սէֆէրեան (Եղիշէ Մանուկեան)

**1995-1996ի ծնունդ տղաք**  
Ա. Աւօ Մնջրեան (Ճեմարան)

Բ. Սերժիօ Սէֆէրեան (Յովակիմեան-Մանուկեան)  
Գ. Բաֆֆի Գայայեան (Յովակիմեան-Մանուկեան)  
Յակոբ Միսիրեան (Ճեմարան)

**1995-1996ի ծնունդ աղջիկներ**  
Ա. Աննա Մարգարեան (Թէքէեան)

Բ. Նինա Մարգարեան (Թէքէեան)  
Գ. Նենաի Մուսթօղլեան (Ճեմարան)  
Լարիկ Աղասարգիսեան (Ճեմարան)

**1997-1998ի ծնունդ տղաք**  
Ա. Յակոբ Ոսկերիչեան (Եղիշէ Մանուկեան)  
Բ. Շանթ Գէորգեան (Ճեմարան)  
Գ. Ստեփան Թէքէլեան (Սոֆիա Յակոբեան)  
Ալէք Յակոբեան (Ճեմարան)

**1997-1998ի ծնունդ աղջիկներ**  
Ա. Միրէյ Պոյաճեան (Եղիշէ Մանուկեան)  
Բ. Փաթիլ Գազանճեան (Եղիշէ Մանուկեան)  
Գ. Ռիթա Յերմանեան (Ճեմարան)  
Գարլա Օհաննէսեան (Ճեմարան)

**1999ի եւ աւելի վեր ծնունդ տղաք**



Ա. Յիլիփ Բեչէք (Ճեմարան)  
Բ. Բիւրակ Խանճիճեան (Ճեմարան)  
Գ. Նարեկ Փանոսեան (Ճեմարան)  
Յակոբ Փօլատեան (Եղիշէ Մանուկեան)

**1999ի եւ աւելի վեր ծնունդ աղջիկներ**  
Ա. Թաշա Լուսա Խաչատուրեան (Ճեմարան)  
Բ. Մանէ Պասմաճեան (Ճեմարան)

**Խմբային դասաւորում**

1. Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան 29 կէտ
2. Ազգ. Եղիշէ Մանուկեան վարժարան 14 կէտ
3. Թէքէեան վարժարան 5 կէտ

**ՃԱՏՐԱԿ**

Ճատրակի մրցումներուն մասնակցեցան 64 աշակերտներ եւ 15 աշակեր-

տուհիներ 14 դպրոցներէ- Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան, Ազգ. Եղիշէ Մանուկեան վրժ., Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճ, Ազգ. Գալուստ Կիւլպէնկեան- Յառաջ վրժ., Հ.Բ.-Ը.Մ.Ի Յովակիմեան-Մանուկեան վրժ., Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վրժ., Թէքէեան վրժ., Հայ Աւետ., Կերթմէնեան վրժ., Հայ Աւետ. Շամլեան-Թաթիկեան վրժ., Հայ Աւետ, Թորոսեան վրժ., Հայ Աւետ. քոլէճ, «Թռչնոց Բոյն», Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն վրժ., Ազգ. Քառասնից Մանկանց վրժ.:

Մրցումները տեղի ունեցան «Հ.Մ.-Ը.Մ.-Աղբալեան» մարզամշակութային կեդրոնի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ, տղոց ու աղջկանց 6 դասակարգերով: Մրցանակներ ստացան հետեւեալները-

**8 տարեկանէն վար տղաք**  
Ա. Հրայր Գասապեան (Ճեմարան)  
Բ. Վահագն Ղազարեան (Ճեմարան)  
Գ. Վարազ Կէօզիլպէօյլուքեան (Ճեմարան)

**8 տարեկանէն վար աղջիկներ**  
Ա. Նարոտ Գլրպողեան (Ճեմարան)  
Բ. Լուրի Պէրպէրեան (Ճեմարան)  
Գ. Նանօր Խառնէլեան (Մեսրոպեան)

**10 տարեկանէն վար տղաք**  
Ա. Կարէն Խալոյեան (Ճեմարան)



Բ. Լեւոն Գալայճեան (Ճեմարան)  
Գ. Արի Աւետիս (Ճեմարան)

**12 տարեկանէն վար տղաք**

Ա. Հայկ Աւետիս (Ճեմարան)  
Բ. Գարլո Դարբինեան (Ճեմարան)  
Գ. Հրակ Ստեփանեան (Եղիշէ Մանուկեան)

Վարազ Կայծ Չաքրեան (Ճեմարան)  
Մելքոն Տէկիրմէնեան (Կ. Բ. Վ.)  
Պետրոս Հերկելեան (Յառաջ)

**12 տարեկանէն վար աղջիկներ**

Ա. Գարին Թաշճեան (Կէրթ.)  
Բ. Մարիանա Գարակիւլեան (Կէրթ.)  
Գ. Մանէ Պասմաճեան (Ճեմարան)

**14 տարեկանէն վար տղաք**

Ա. Հրակ Գլըպոզեան (Ճեմարան)  
Բ. Արեքսանտր Էլպէքեան (Ճեմարան)

Գ. Աւօ Մարտիրոսեան (Եղիշէ Մանուկեան)

Կարօ Խալուճեան (Եղիշէ Մանուկեան)

**14 տարեկանէն վար աղջիկներ**

Ա. Ռիթա Առոյեան (Ճեմարան)  
Բ. Մէրի Թաշճեան (Կէրթմենեան)  
Գ. Քրիսթին Յովսէփեան (Ճեմարան)

**16 տարեկանէն վար տղաք**

Ա. Արամ Աբրահամեան (Ճեմարան)  
Սեդրակ Հաճեան (Ս. Յակոբեան)  
Բ. Խաթակ Թապազեան (Ճեմարան)  
Գ. Սերոբ Ստեփանեան (Կ. Բ. Վ.)

**16 տարեկանէն վար աղջիկներ**

Ա. Լարա Տէմիրճեան (Յառաջ)

**18 տարեկանէն վար տղաք**

Ա. Յակոբ Հարֆուշեան (Յովակիմեան-Մանուկեան)

Բ. Սերօ Քելուկեան (Կ. Բ. Վ.)  
Գ. Պերճ Քէրթէշեան (Ճեմարան)

**18 տարեկանէն վար աղջիկներ**

Ա. Բայրիկ Առոյեան (Ճեմարան)  
Բ. Նուարդ Ստեփանեան (Կ. Բ. Վ.)

**Խմբային դասաւորում**

1. Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան 22.5 կէտ
2. Ազգ. Եղիշէ Մանուկեան վարժարան 17 կէտ
3. Կէրթմենեան վարժարան 16.5 կէտ

**ՎԱՁԲ**

Վազքի մրցումներուն մասնակցեցան 63 աշակերտներ եւ 43 աշակերտուհիներ 15 դպրոցներէ։- Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան, Ազգ. Եղիշէ Մանուկեան վրժ., Ազգ. Գալուստ Կիւլպէնկեան-Յառաջ վրժ., Ազգ. Սուրէն Խանամիրեան վրժ., Հ. Բ. Լ. Մ. Յովակիմեան- Մանուկեան վրժ., Հայ Աւետ. Կէրթմենեան վրժ., Հայ Աւետ., Շամիեան-Թաթիկեան վրժ., Հայ Աւետ., Թորոսեան վրժ., Հայ Աւետ. քոլէճ, «Թռչնոց Բոյն», Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն վրժ., Ազգ. Քառասնից Մանկանց վրժ., Հայ Կաթողիկէ Հոփսիմեանց վրժ., Հայ Կաթողիկէ Ս. Ազնէս վրժ.։

Մրցումները կատարուեցան Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ, տղոց եւ աղջկանց երեք դասակարգերով։

Մրցանակներ ստացան հետեւեալները։-

**1997էն վեր ծնունդներ/650 մեթր**

**Տղաք**

Ա. Բաֆֆի Քէչէճեան (Եղիշէ Մանուկեան) 2'20"72

Բ. Յովիկ Պէրպէրեան (Ճեմարան) 2'21"04

Գ. Բաֆֆի Աւետիքեան (Շամիեան) 2'25"34

**Աղջիկներ**

Ա. Արին Թաշճեան (Ճեմարան) 2'45"50

Բ. Կրէյս Միսիրեան (Ճեմարան)

Գ. Կրէյս Մարտիրոսեան (Ճեմարան)

**1995-1996ի ծնունդներ երկար վազք-1050 մեթր**

**Տղաք**

Ա. Անդօ Մարաշեան («Թ. Բոյն») 3'52"32

Բ. Վարդան Սարգիսեան (Եղիշէ Մանուկեան) 3'54"35

Գ. Ժազ Եազուկեան (Հոփսի.) 4'04"04

**Աղջիկներ**

Ա. Մակի Զաքարեան (Ճեմարան) 5'03"37

Բ. Նայիրի Էլմէշ («Թ. Բոյն») 5'04"98

Գ. Յոլեր Սասունեան (Եղիշէ Մանուկեան)

**1995-1996ի ծնունդներ/վազք 80 մեթր**

**Տղաք**

Ա. Յարութ Իսմայիլ («Թ. Բոյն») 11"28





Բ. Սարո Նոխուսեան (ձեմարան) 11"33

Գ. Փիթըր Պետրոսեան (Խանամիրեան) 11"54

**Աղջիկներ**

Ա. Դալար Պետրիկեան (Եղիշ Մանուկեան) 13"06

Բ. Նայիրի Էյմէշ («Թ. Բոյն») 13"91

Գ. Մեղրի Թորոս (ձեմարան) 14"97

**1993-1994ի ծնունդներ/վազբ - 1450 մեթր**

**Տղաք**

Ա. Սարգստ Գեթսեմանեան (ձեմարան) 7'02"13

Բ. Խաթակ Կէօքճեան (Եղիշ Մանուկեան) 7'06"11

Գ. Վարդան Սարգիսեան (Եղիշ Մանուկեան) 7'20"47

**Աղջիկներ**

Ա. Արին Գասապեան (ձեմարան) 5'50"69

Բ. Կարին Կէօքճեան (ձեմարան) 8'09"29

Գ. Կարինէ Հալոսթեան (Հայ Աւետ. Բ.) 9'01"50

**1993-1994ի ծնունդներ-կարճ վազբ 100 մեթր**

**Տղաք**

Ա. Հրակ Գարագաշեան (ձեմարան) 12"75

Բ. Գրիգոր Խաչատուրեան (Եղիշ Մանուկեան) 13"35

Գ.- Աբրահամ Աբրահամեան (Հոբի) 13"69

**Աղջիկներ**

Ա. Լուի Թաշճեան (ձեմարան) 13"15

Բ. Էլիաս Հըրու (Յովակիմեան) 16"00

Գ. Փաթիլ Պողոսեան (Եղիշ Մանուկեան) 17"03

**Դրօշարչաւ**

**Տղաք**

Ա. Եղիշ Մանուկեան 4'25"44

Բ. ձեմարան 4'32"15

Գ. Շամլեան 5'42"93

**Աղջիկներ**

Ա. ձեմարան 5'18"25

Բ. Եղիշ Մանուկեան 5'43"25

Գ.- Մեսրոպեան 6'10"09

**Խմբային դասաւորում**

1. Համազգայինի Մելանքթոն եւ

Հայկ Արսլանեան ձեմարան 33 կէտ

2. Ազգ. Եղիշ Մանուկեան վարժարան 20 կէտ

3. «Թռչնոց Բոյն» 10 կէտ

**ՊԱՔԵԹՊՈԼ**

Պաքեթպոլի մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերին մեծ տղոց 9 խումբեր (135 մարզիկ), միջակ տղոց 6 խումբեր (90 մարզիկ), մեծ աղջկանց 6 խումբեր (90 մարզիկ) եւ միջակ աղջկանց 8 խումբեր (120 մարզիկ): Յիշեալ 29 խումբերը ներկայացուցին 10 միջնակարգ եւ երկրորդական վարժարաններ: Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարան, Ազգ. Եղիշ Մանուկեան վրժ., Ազգ. Գալուստ Կիւլպէնկեան-Յառաջ վրժ., Ազգ. Լեւոն եւ Սոփիա Յակոբեան քոլէճ, Հ.Բ.Ը.Մ.ի Յովակիմեան-Մանուկեան վրժ., Հայ Կաթ. Մեսրոպեան վրժ. Հայ Կաթ. Հոբիսիմեանց վրժ., Հայ Աւետ. Կէրթմենեան վրժ., Հայ Աւետ. Շամլեան-Թաթիկեան վրժ., Հայ Աւետ. Կեղրոնական Բարձրագոյն վրժ.:

Մրցումներու առաջին հանգրուանը եղաւ Խոյնյանական ձեւով, իսկ երկրորդ հանգրուանին կիրարկուեցաւ նաք-առութի դրութիւն: Տեղի ունեցան 68 մրցումներ, բոլորն ալ Հ.Մ.Ը.Մ.ի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ:





Ստորեւ ընդհանուր դասաւորումները՝

**ՄԵՍ ՏՂԱՔ**

- 1. Համազգայինի Մելանքիթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարան
- 2. Հայ Կաթողիկէ Հռիփսիմեանց վարժարան
- 3. Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարան

**ՄԵՍ ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Հայ Կաթողիկէ Հռիփսիմեանց վարժարան
- 2. Համազգայինի Մելանքիթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարան
- 3. Ազգ. Եղիշէ Մանուկեան վարժարան

**ՄԻՋԱԿ ՏՂԱՔ**

- 1. Համազգայինի Մելանքիթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարան
- 2. Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարան

3. Ազգ. Եղիշէ Մանուկեան վարժարան

**ՄԻՋԱԿ ԱՂՋԻԿՆԵՐ**

- 1. Համազգայինի Մելանքիթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարան
- 2. Ազգ. Եղիշէ Մանուկեան վարժարան
- 3. Հայ Կաթողիկէ Հռիփսիմեանց վարժարան

**ԼԱԻԱԳՈՑՆ**

**ՄԱՐՋԻԿԻ ՏԻՏՂՈՍ**

Մեծ տղաք՝ Նարեկ Զատիկեան (Յոսիպիմեան-Մանուկեան) Միջակ տղաք Արամ Աբրահամեան (ձեմարան) եւ Հրակ Պետրոսեան (Եղիշէ Մանուկեան):

**ՅՈՒԹՊՈԼ**

Ֆուլթայլի մրցումներուն մասնակցեցան մեծ տղոց 11 խումբեր (165 մարզիկ), միջակ տղոց 16 խումբեր (240 մարզիկ) եւ փոքր տղոց 12 խումբեր (180 մարզիկ)՝ միջնակարգ եւ երկրորդական 21 վարժարաններէ։-Համազգայինի Մելանքիթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարան, Ազգ. Եղիշէ Մանուկեան վրժ., Ազգ. Գալուստ Կիւլպէնկեան-Յառաջ վրժ., Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճ, Ազգ. Խանամիրեան վրժ., Հ.Բ.Ը.Մ.ի Յովակիմեան-Մանուկեան վարժարան

եան-Մանուկեան վրժ., Հայ Կաթ. Մեսրոպեան վրժ., Հայ Աւետ. Կէրթմենեան վրժ., Հայ Աւետ. Շամլեան-Թաթիկեան վրժ., Հայ Աւետ. Կեդրոնական բարձրագոյն վրժ., Հայ կաթ. Հռիփսիմեանց վրժ., Ազգ. Քառասնից Մանկանց վրժ., Հայ Աւետ. Այնճար, Հայ Աւետ. քոլէճ, Հայ Աւետ. Թորոսեան վրժ., Սահակեան վրժ., Միխիթարեան վրժ., Հայ Կաթողիկէ Գէորգ Հարպոյեան վրժ., «Թուչնոց բոյն», Հայ Կաթողիկէ Ս. Ագնէս վրժ.։

Ինչպէս պատքեթպոլի, ֆուլթայլի պարագային եւս, մրցումներու առաջին հանգրուանը եղաւ ախոյեանական ձեւով, իսկ երկրորդ հանգրուանին կիրարկուեցաւ նաք-առեթի դրութիւն։ Բոլոր մրցումները (118 խաղ) կատարուեցան Հ.Մ.Ը.Մ.ի նորակառոյց «Պօղոս Արիս» դաշտին վրայ, Պուրճ Համուտ։

Ստորեւ՝ ընդհանուր դասաւորումները։-

**ՏՂԱՔ**

- 1. Հայ Աւետ. Շամլեան-Թաթիկեան վրժ.
- 2. Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վրժ.
- 3. Ազգ. Եղիշէ Մանուկեան վրժ.

**ՄԻՋԱԿ ՏՂԱՔ**

- 1. Հայ կաթ. Մեսրոպեան վարժարան
- 2. Համազգայինի Մելանքիթոն եւ Հայկ Արսլանեան ձեմարան
- 3. Հ.Բ.Ը.Մ.ի Յովակիմեան-Մանուկեան վարժարան





**ՓՈՔՐ ՏՂԱՔ**

1. Հայ Կաթողիկէ Գէորգ Հարպոյ-եան վարժարան
2. Հայ Կաթողիկէ Մերոպեան վարժարան
3. Համազգայինի Մերանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան

**ԼԱԲԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿԻ ՏԻՏՂՈՍ**

Մեծ տղաք՝ Ժողէֆ Ճորճեան (Մերոպեան)

Միջակ տղաք՝ Յակոբ Նաճարեան (Ճեմարան)

Փոքր տղաք՝ Րաֆֆի Խալոյեան (Ճեմարան)

**ԱՌԱԲԵԼԱԳՈՅՆ ԿՈԼՆԵԱՆԱԿՈՂ ՄԱՐԶԻԿ**

Մեծ՝ Սեւակ Օճանեան՝ 22 կոլ (Շամլեան-Թաթիկեան)

Միջակ՝ Մամաս Քէհէեան՝ 21 կոլ (Մերոպեան)

Փոքր՝ Նարեկ Տեպոլլեան՝ 31 կոլ (Ճեմարան)

Յայտնենք, որ ԼԵՎԱՄ-ի մարզախաղերու տիպար մարզիկ ընտրուեցաւ Նարեկ Զատիկեան՝ Հ.Բ.Ը.Մ.ի Յովակիմեան-Մանուկեան վարժարանէն, իսկ տիպար մարզիչ՝ Խաչիկ Գառնէշեան Ազգ. Գալուստ Կիւլպէնկեան-Յառաջ վարժարանէն:

with the complements of

**Restaurant Al-Mayass**



# 40 ԽՈՒՄԲԵՐՈՎ ԵՒ 600 ՄԱՐԶԻԿՆԵՐՈՎ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆՈՐԱՍԵՂԾ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՅԵՄՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՎԿՈՒԵՑՁԻ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

## Թղթակից ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ

**5** Յունիսին վարագոյրը իջաւ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի երկրորդական նորաստեղծ խումբերու ախոյեանութեան վրայ, որ չորս ամսուան մրցումներով իր չուրջ մեծ հետաքրքրութիւն եւ խանդավառութիւն ստեղծեց, համախմբելով 12-20 տարեկան 600 մարզիկներ՝ 40 խումբերու մէջ:

Քսան տարուան ընդմիջումէ ետք կատարուած այս ախոյեանութիւնը նորութիւն մը եղաւ շատերուն համար: Այս նպատակով յառաջացաւ յատուկ յանձնախումբ, որուն մաս կազմեցին եղբայրներ Խորէն Գուլաճեան, Արա Գասապեան, Յարութ Ղազարեան, Կիրակոս Գէորգեան, Արիս Խաչերեան, Բաֆֆի Յովհաննէսեան, Սերուժ Աբիկ-

եան, Յակոբ Հաննէեան եւ Ժան Գարաչայեան:

Ախոյեանութիւնը տեղի ունեցաւ տարիքային չորս բաժանումներու դրութեամբ.-

- Ա. 1999ի ծնունդներ եւ վեր
- Բ. 1996-1998ի ծնունդներ
- Գ. 1993 - 1995ի ծնունդներ
- Դ. 1992ի ծնունդներ եւ վար

Մասնակցութեան պատկերը եղաւ խրախուսիչ:

●1999ի ծնունդներ եւ վեր տարիքային բաժնին մասնակցեցան 14 խումբեր՝ բաժնուած չորս խմբակի մէջ.-

- Ա. խմբակ.- «Անթիլիաս 1», «Ակադեմիա 4», «Ղարաբաղ», «Անթիլիաս 2»
- Բ. խմբակ.- «Ռոստոմ», «Ակադեմիա 2», «Անթիլիաս 4», «Ակադեմիա 3»
- Գ. խմբակ.- «Ակադեմիա 1», «Անթիլիաս 3», «Սարղարապատ», «Դրօ»
- Դ. խմբակ.- «Նիկոլ Դոման», «Արմէն Գարօ»

●1996-1998ի ծնունդներու բաժնին մասնակցեցան 6 խումբեր.- «Գարեգին Նժդէհ» (Հ.Մ.Ը.Մ.ի Ակադեմիա), «Ռաուտա» (Հ.Մ.Ը.Մ. Պաուլըրիէ), «Այնճար» (Հ.Մ.Ը.Մ. Այնճար), «Ճիւնի» (Հ.Մ.Ը.Մ.ի Ակադեմիա), «Անթիլիաս» (Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս) եւ «Թեհլիրեան» (Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ):

●1993-1995ի ծնունդներու բաժնին մասնակցեցան 10 խումբեր.- «Ազատամարտ» (Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ), «Աղբալեան» (Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս), «Թեհլիրեան» (Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ), «Հայրենիք» (Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ), «Լէյլալան», (Հ.Մ.Ը.Մ. Պաուլըրիէ), «Դրօ» (Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ), «Անթիլիաս» (Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս), «Ռաուտա» (Հ.Մ.Ը.Մ. Պաուլըրիէ), «Թեհլիրեան» (Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ) եւ «Գարեգին Նժդէհ» (Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս):

●1992ի ծնունդներ եւ վար բաժնին մասնակցեցան 12 խումբեր.- «Լէյալան 1» (Հ.Մ.Լ.Մ. Պաուլըիէ), «Հայրենիք» (Հ.Մ.Լ.Մ. Պուրճ Համուտ), «Ղարաբաղ» (Հ.Մ.Լ.Մ. Պաուլըիէ), «Աղբալեան» (Հ.Մ.Լ.Մ. Անթիլիաս), «Դրօ» (Հ.Մ.Լ.Մ. Պուրճ Համուտ), «Գարեգին Նժդեհ» (Հ.Մ.Լ.Մ. Անթիլիաս), «Ռաուտա» (Հ.Մ.Լ.Մ. Պաուլըիէ), «Սարգարապատ» (Հ.Մ.Լ.Մ. Պուրճ Համուտ), «Ազատամարտ» (Հ.Մ.Լ.Մ. Պէյրուիթ), «Կարս» (Հ.Մ.Լ.Մ. Պուրճ Համուտ), «Այնճար» (Հ.Մ.Լ.Մ. Այնճար), «Լէյալան 2» (Հ.Մ.Լ.Մ. Պաուլըիէ):

Մրցումներու աւարտին, ախոյեանական տիտղոսներու տիրացան «Սարգարապատ» (1992ի ծնունդներ եւ վար), «Գարեգին Նժդեհ» (1993-1995ի ծնունդներ), «Այնճար» (1996-1998ի ծնունդներ) եւ «Ռոստոմ» (1999ի ծնունդներ եւ վեր) խումբերը:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները՝-

**1992ի ԾՆՈՒՆԴՆԵՐ ԵՒ ՎԱՐ**

**Ա. Հանգրուան**

«Լէյալան 1» - «Հայրենիք» 2-2  
(«Հայրենիք» յաղթական փենալթիներով)

«Ղարաբաղ» - «Աղբալեան» 4-2  
«Դրօ» - «Գարեգին Նժդեհ» 5-1  
«Ռաուտա» - «Սարգարապատ» 5-3



«Ազատամարտ» - «Կարս» 1-1 («Ազատամարտ» յաղթական փենալթիներով)  
«Այնճար» - «Լէյալան 2» 3-0

**Բ. Հանգրուան**

«Ղարաբաղ» - «Հայրենիք» 3-2  
«Դրօ» - «Սարգարապատ» 2-2 («Դրօ» յաղթական փենալթիներով)  
«Ազատամարտ» - «Այնճար» 0-5

**Կիսաւարտական**

«Այնճար» - «Սարգարապատ» 2-5  
«Ղարաբաղ» - «Դրօ» 3-7

**Աւարտական**

«Դրօ» - «Սարգարապատ» (Մրցումը ընդհատուեցաւ եւ «Սարգարապատ» 2-0 յաղթական հռչակուեցաւ, որովհետեւ «Դրօ» խախտած էր մրցաշարքի կանոնագրութեան 11րդ յօդուածը):

**1993-1995ի ԾՆՈՒՆԴՆԵՐ**

**Ա. Հանգրուան**

«Ազատամարտ» - «Աղբալեան» 0-5  
«Թեյլիբեան» - «Հայրենիք» 3-4  
«Լէյալան» - «Դրօ» 1-7  
«Անթիլիաս» - «Ռաուտա» 2-0





«Թեհլիրեան» - «Գարեգին Նժդեհ» 1-7

**Բ. Հանգրուան**

«Աղբալեան» - «Հայրենիք» 7-1

«Անթիլիաս» - «Դրօ» 0-3

«Անթիլիաս» - «Գարեգին Նժդեհ» 0-3

**Կիսաւարտական**

«Անթիլիաս» - «Գարեգին Նժդեհ» 1-3

«Աղբալեան» - «Դրօ» 1-7

**Աւարտական**

«Դրօ» - «Գարեգին Նժդեհ» 1-1 («Գա-

րեգին Նժդեհ» յաղթական փենալթինե-րով)

**1996-1998ի ԾՆՈՒՆԴՆԵՐ**

**Ա. Հանգրուան**

«Գարեգին Նժդեհ» - «Ռաուտա» 3-0

«Այնճար» - «Ճիւնի» 6-0

«Անթիլիաս» - «Թեհլիրեան» 2-0

**Կիսաւարտական**

«Դրօ» - «Անթիլիաս» 0-2 («Դրօ» պարտուած հռչակուած, որովհետեւ իր մարզիկներէն մէկը խաղացած էր այլ խումբէ)։

«Այնճար» - «Գարեգին Նժդեհ» 5-0

**Աւարտական**

«Անթիլիաս» - «Այնճար» 1-6

**1999ի ԾՆՈՒՆԴՆԵՐ ԵՒ ՎԵՐ**

**Աւարտական**

«Ռոստոմ» - «Ակադեմիա 1» 2-0

Յայտնենք, որ երկրորդական խումբերու ախոյեանութեան կողքին տեղի ունեցաւ վեթերաններու բարեկամական մրցում։ Վեթերաններու «Կապոյտ» խումբը 2-0 արդիւնքով յաղթեց «Կարմիր» խումբին։

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻԲՆԸ ՄԵՏԱԼՆԵՐՈՎ ԿԸ ՊԱՏՈՒԷ ԻՐ ՎԵԹԵՐԱՆ ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐԸ

## Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ

**Հ**ՄԸՄԻ ֆուլթպոլի երկրորդական խումբերու ախոյեանութեան աւարտին, Լիբանանի Շրջանային Վարչութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցաւ յատուկ մետալներով պատուելու իր վեթերան ֆուլթպոլիստները, որոնք անցնող չորս ամիսներուն իրենց օժանդակութիւնը բերին երկրորդական խումբերու ախոյեանութեան կազմակերպման։

Մետալներու տուչութեան ձեռնարկը տեղի ունեցաւ

«Սարգարապատ» ակումբին մէջ, ներկայութեամբ Շրջանային Վարչութեան եւ ֆուլթպոլի յանձնախումբի անդամներու։

Ձեռնարկին սկիզբը կատարուեցաւ ֆուլթպոլի երկրորդական խումբերու մեծ տղոց (1992ի ծնունդներ եւ վար) ախոյեան խումբին պարգեւատրումը՝ բաժակով։ Ախոյեան հռչակեցաւ եւ բաժակին տիրացաւ «Սարգարապատ» խումբը, որ աւարտականին մրցակից ունեցաւ «Դրօ» խումբը։

Ապա, խօսք առաւ ՀՄԸՄԻ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէչիչեան։ Ան ըսաւ, որ ֆուլթպոլի երկրորդական խումբերու ախոյեանութեան յաջող ընթացքը եւ աւարտական մրցումներուն իրականացումը



ինքնին յղաթանակ մըն են միութեան համար: Այսօրուան մեր մարզիկները պիտի ըլլան Հ.Մ.Ը.Մ-ի վաղուան փառքի կերտիչները:

Շարունակելով, եղբ. Քէշիշեան հաստատեց. «Բոլոր մրցումներուն յաղթական կամ պարտուած խումբեր մենք չտեսանք, ինչ որ ալ եղան մրցումներուն արդիւնքները, որովհետեւ բոլորս եղանք յաղթական, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ն էր յաղթականը: Ճիշդ չորս ամիս, 4 դասակարգերու բաժնուած 40 խումբեր, շուրջ 600 մարզիկներ փորձեցին իրենց լաւագոյնը տալ եւ մարզական ոգիով մրցել՝ լաւագոյն արդիւնքները արձանագրելու համար: Այս դժուարին գործը բնականաբար մեծ յաջողութեամբ գլուխ հանեցին Ֆուլթայոլի երկրորդական խումբերու յանձնախումբին բոլոր անդամները: Կը շնորհաւորենք քուլիսներու ետին աշխատող բոլոր անձերը, անխաիր, առանց անուններ նշելու»:

Եղբ. Քէշիշեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Այժմ, Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթայոլի դպրոցին մէջ կը պատրաստուին կրտսեր մարզիկներ, որոնք իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Լիբանանի Ֆուլթայոլի տարիքային ախոյեանութեան մրցումներուն: Մասնաձեւերու երկրորդական խումբերը պիտի ըլլան այն կամուրջները, ուրկէ լաւագոյն մարզիկները պիտի ընտրուին մաս կազմելու ներկայացուցչական խումբին՝ բարձր պահելու համար Հ.Մ.Ը.Մ-ի դրօշը Ֆուլթայոլի մարզին մէջ: Դրժբախտաբար, ներկայիս Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթայոլի ներկայացուցչական խումբը իր արժանի տեղը չի գտնուիր: Վստահ ենք, սակայն, որ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթայոլի դպրոցը աւարտող մարզիկները, ինչպէս նաեւ

երկրորդական խումբերու փայլուն Ֆուլթայոլիստները մօտիկ ապագային անկարելին կարելի դարձնելով պիտի յաջողին խումբը վերադարձնել իր ճիշդ տեղը՝ Ա. դասակարգ: Օգտուելով այս յաջող մրցաշարքին արդիւնքէն՝ յառաջիկայ տարիներուն յաւելեալ թափ պիտի տանք անոր, օգտուելով Հ.Մ.Ը.Մ-ի վեթերան Ֆուլթայոլիստներուն ներկայութենէն եւ բոլոր անոնցմէ, որոնք կը փափաքին միութեան օգտակար դառնալ եւ միանալ այն կամաւոր Հ.Մ.Ը.Մ-ականներուն, որոնք իրենց զոհողութիւնը երբեք չեն զլանար միութեան»:

Խօսքին աւարտին, եղբ. Քէշիշեան յատուկ մետալներով պարգեւատրեց հետեւեալ վեթերան Ֆուլթայոլիստները.- Դրօ Քէհէեան, Փանոս Ղազարեան, Փանոս Գուճանեան, Անդրանիկ Թորոսեան, Աբգար Աբգարեան, Յակոբ Փաչանեան, Յովսէփ Յովհաննէսեան, Եսայի Պոյաճեան, Նշան Պալեան, Յակոբ Անտոնեան, Յակոբ Աբգարեան, Վարդգէս Քասոյեան, Վահէ Մինասեան, Բարսեղ Գաւճեան, Յովհաննէս Յուսամեան, Զաւիկ Գալֆայեան, Ռադէպ Շաքար, Միկէ Մկրտիչեան եւ Յակոբ Ազրապեան:

Յայտնենք, որ յիշեալ ձեռնարկէն չորս օր առաջ, Հ.Մ.Ը.Մ-ի «Պօղոս Արիս» դաշտին վրայ գնահատագիրներ ստացած էին հետեւեալ վեթերան Ֆուլթայոլիստները.-

Վահէ Մինասեան, Յարութիւն Մարկոսեան, Բարսեղ Գաւճեան, Յովհաննէս Յուսամեան, Զաւիկ Գալֆայեան, Ռադէպ Շաքար, Միկէ Մկրտիչեան, Զաւէն Գասապեան, Փանոս Գուճանեան, Յակոբ Աբգարեան եւ Յակոբ Ազրապեան:





# «ԳՈՐԾԵԼ ԲԱՐԻՔ ՄԸ ԱՄԷՆ ՕՐ»

## (Հ.Մ.Ը.Մ.Ի ՃԻՒՆԻԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ «ԵԱՆՊՈՒՀ» ՄԻՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԻՒՆ)

### Հ.Մ.Ը.Մ.Ի ԾԻՒՆԻԻ մասնաճյուղի վարչութիւնը ԾԻՒՆԻ

**Կ**իրակի, 8 Մայիս 2011ի առաւօտեան կանոնադրական Հ.Մ.Ը.Մ.Ի ճիւղի մասնաճիւղի փոխադրակառքը արդէն իսկ սկսած էր հաւաքել մասնաճիւղին դայիկ-արձուկները, որոնք իրենց կիրակնօրեայ սովորական հաւաքոյթը որոշած էին կատարել այլ ձեւով: Արդարեւ, մասնաճիւղի պատասխանատուներուն նախաձեռնութեամբ, գայլիկներն ու արձուկները իրենց մասնակցութիւնը բերին թերաճ մանուկներու «Շանպուհ» միութեան քայլարշաւին, որ ընթացք առաւ ճիւղի քաղաքապետարանի դաշտէն:

Ժամը 9:30ին, քաղաքապետարանին առջեւ տեղի ունեցաւ դեղարուեստական յայտագիր՝ մասնակցութեամբ թերաճ փոքրիկներուն եւ լիբանանցի հանրաժանօթ մարզիկ եւ հանդիսավար Թոնի Պարուտի: Հ.Մ.Ը.Մ.Ի ճիւղի գայլիկները առիթը ունեցան հանդիպելու քաղաքապետին՝ Նասմթալա Տրէմին, եւ անոր հետ յիշատակի լուսանկար մը ունենալու: Այնուհետեւ, քայլարշաւը շարունակուեցաւ դէպի Շիր հրապարակը, ուր երգիչ Թոնի Հաննա կատարեց քանի մը երգեր, նաեւ քաջալերեց քայլարշաւին մասնակից կազմակերպութիւններն ու միութիւնները, որոնք ամէն տեսակ խտրակա-



նութենէ վեր բարձրանալով՝ միացած էին մարդասիրական այս ծրագրին:

Ապա, ճիւղի մասնաճիւղէն քայլարշաւին մասնակցած 23 գայլիկ-արձուկները, վարչութեան անդամներուն եւ ըՄ-կառուտական խորհուրդին ղլխաւորութեամբ, վերադարձան ակումբ, ուր իրենց բացատրուեցաւ օրուան խորհուրդը, թէ ինչպէս պէտք է նեցուկ կանգնիլ իրենց տարեկից, սակայն որոշ թերութիւններ ունեցող մանուկներուն: Նաեւ անոնց փոխանցուեցաւ, որ քայլարշաւին մասնակցելով իրենք գործնականօրէն կատարած են գայլիկական խոստումի կէտերէն մէկը՝ «Գործել բարիք մը ամէն օր»:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ ԶԱՀԼԷԻ ՄԷՁ

### Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի շրջանի Վկայեալ կարգի դաստիարակչական երկօրեայ սեմինարը տեղի ունեցաւ 14 եւ 15 Մայիս 2011ին, Չաշլէի ակումբին մէջ, կազմակերպութեամբ՝ Լիբանանի Շրջանային Սկսող-Խորհուրդին, մասնակցութեամբ Պէյրութի, Անթիլիասի, Պուրճ Համուտի, Ժըտէյտէի եւ Այնճարի մասնաճիւղերէն 21 քոյր-եղբայրներու:

Սեմինարը սկսաւ Շաբաթ, 14 Մայիսի յետմիջօրէին, «Ով հայ արի» քայլերգով:

Բացման խօսքէն ետք, Վկայեալ կարգի թեկնածու քոյրերն ու եղբայրները յաջորդաբար ներկայացուցին իրենց պատրաստած նիւթերը:

Պէյրութի մասնաճիւղէն եղբ. Զաւէն Տէր Պետրոսեան ներկայացուց «Գիտնալ եւ մեկնաբանել Հ.Մ.Ը.Մ.Ի սկսող-տուլթեան նպատակը» նիւթը:

Եղբ. Ռազմիկ Տօնիկեան, Պէյրութի մասնաճիւղէն, ներկայացուց Սան Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագրերը: «Խմբակի, խումբի եւ միաւորի դրութեան կարեւորու-



Թիւնը եւ գործելակերպը» ներկայացուց Անթիլիասի մասնաճիւղէն եղբ. Գէորգ Նոխուտեան:

Կարճ դադարէ ու նախընթրիքէ մը ետք, Պէյրութի մասնաճիւղէն քոյր Էլիզ Թելֆէեան ներկայացուց «Բնութեան մէջ գործունէութիւնները» նիւթը:

Անթիլիասի մասնաճիւղէն քոյր Մենար Պոյաճեան ներկայացուց «Խոստումն ու դաւանանքը»:

Պուրճ Համուտի մասնաճիւղէն քոյր Մարկրիթ Պուտազեան ներկայացուց «ըՍկառուտական կարգերն ու մասնագիտական պէճերը» նիւթը, իսկ քոյր Լիւսի Գոճայեան խօսեցաւ «Խմբապետը իբրեւ ղեկավար» նիւթին մասին:

Երեկոյեան ընթրիքէն ետք, սեմինարին մասնակիցները շարունակեցին ներկայացնել իրենց պատրաստած նիւթերը:

«ՄԱԿը եւ իր յարակից կազմակերպութիւնները (Հայաստանի դիրքը)» նիւթը ներկայացուց քոյր Լիզա Տէօրտիւլեան:

Ապա, Անթիլիասի մասնաճիւղէն քոյր Թամար Ճուլֆայեան ներկայացուց «Թրքական քաղաքականութիւնը (Հայկական հարց) 1878-1894» նիւթը:

Շրջանային խմբապետ եղբ. Ժանօ Քէչէճեան մասնակցողներուն ներկայացուց «Համաշխարհային սկառուտութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտութեան պատմութիւնը, նպատակը եւ կառուցը» նիւթը:

Յաջորդ օր, առաւօտեան զարթնումէն եւ նախաճաշէն ետք շարունակուեցան նիւթերու ներկայացումները:

Անթիլիասի մասնաճիւղէն քոյր Փաթիլ Եսայեան ներկայացուց «Թրքահայաստանի կացութիւնը (Հայկական հարց) 1874-1894» նիւթը:

Ժրտէյտէի մասնաճիւղէն եղբ. Կորիւն Յովհաննէսեան ներկայացուց «Մեծ տէրութեանց քաղաքականութիւնը (Հայկական հարց)» նիւթը:

Լիբանանեան Ֆետերասիոնի խմբապետներէն Մըխայէլ Խէյրալլա ներկաներուն փոխանցեց Ժամանակակից կազմակերպչական արդի ձեւերու մասին նիւթ մը:

Դադարէ ու հանգիստէ մը ետք, Անթիլիասի մասնաճիւղէն քոյր Շաղիկ Ճինպաշեան ներկայացուց «Քաղաքացիական դաստիարակութիւնը- կրկնակի պարտականութիւն եւ պարտաւորութիւն» նիւթը:

Ժրտէյտէի մասնաճիւղէն քոյր Նանօր Ադամեան ներկայացուց «Դաստիարակչական աշխատանքի մը թղթածրարը ու տեղեկագիրը պատրաստելու ձեւը»:

«Յայտագիր պատրաստելու եղանակը (մոկլի- գայլի-



արծուիկ)» ներկայացուց եղբ. Սաբօ Գրիգորեան՝ Ժրտէյտէի մասնաճիւղէն:

Ժորժ Մալճեան Ժրտէյտէի մասնաճիւղէն ներկայացուց յայտագիր պատրաստելու եղանակը (արի-արենոյշ-երէց-պարմանուհի):

«Քարոզչական աշխատանքի ձեւերը» ներկայացուց եղբ. Վարուժ Զաքարեան՝ Ժրտէյտէի մասնաճիւղէն:

«Խմբապետի պարտաւորութիւններն ու պարտականութիւնները եւ աստիճանաւորական ժողովի կարեւորութիւնը» ներկայացուց քոյր Թամար Քէչիշեան:

Իւրաքանչիւր մասնակցող ունէր նիշերու յատուկ տախտակ, ուր իւրաքանչիւր անհատ՝ նկատի ունենալով նիւթերը ներկայացնող քրոջ կամ եղբոր պատրաստութեան ու ներկայացման ձեւը, դրաւ համապատասխան նիշեր, որոնք հետագային նկատի պիտի առնուին կազմակերպիչ մարմնին կողմէ:

Սեմինարին աւարտին, մասնակցողներուն փոխանցուեցան արժեւորման թղթիկներ, ուր իւրաքանչիւր մասնակցող փոխանցեց իր անձնական տպաւորութիւնները՝ սեմինարին մասին:

Ներկաներուն սեմինարի մասնակցութեան հաստատագիրները յանձնելէ ետք, երկօրեայ հանդիպումը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
**www.homenetmen.org**  
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org



# Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ 27ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄ ԵՒ ՇԵՓՈՐԱԽՈՒՄԻ 20ԱՄԵԱԿ

## Մեկան Նազարեան ՓԱՐԻՉ

**Ա**րդեօք կրկնութիւն չէ՞ ամէն տարի բանակումի երթալը: Նո՛յն վըրանները, նո՛յն կանչերը, նո՛յն խաղերը...

Սակայն չփորձուիք այս հարցումը ուղղել սկաուտի մը, որովհետեւ անոր զարմացած ու զայրացած աչքերը կրնան պատասխանել, թէ ոչի՛նչ նոյնն է, ո՛չ մթնոլորտը, ո՛չ սորվածները, ո՛չ ապրածները, ոչ ալ ընկերական կապերը... Ամէն տարի անոնք կը լիանան «բարիք մը գործելու» գիտակցութեամբ, կը զօրանան ընկերասիրութեամբ, կը հպարտանան իրենց ազգութեամբ ու աւելի կը մարդանան «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով:

Ամրան արձակուրդը սկսած է: Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի սկաուտական խումբապետական կազմը ժրաջան աշխատանքի մէջ է: Կը պատրաստուի բանակումը:



Բանակավայրի ու բանակումի կարիքները հոգացուած են, անհրաժեշտ կարգադրութիւնները կատարուած են: Առաջին սուլիչը կը հնչէ Յուլիս 4ին: Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի 27րդ տասնօրեայ բանակումին բացումը կը յայտարարուի, 37 մասնակիցներով: Կծիկը քակուած է... իրարու կը յաջորդեն օրերը,

որոնց ընթացքին կ'իրագործուին նախապէս պատրաստուած ծրագիրներն ու աշխատանքները՝ սկաուտական, ազգային թէ՛ այլ:

Այս տարուան իւրաքանչեւութիւններէն պիտի մնայ բանակումի երկրորդ օրը, երբ բանակավայրը վերածուած «եկեղեցույ», Թեմակալ Առաջնորդ Նորվան Արք. Զաքարեանի կողմէ մատուցուած բացօթեայ Պատարագը դրոշմուած պիտի մնայ մասնակիցներու հոգիներէն ներս:

Յեխարշաւը, ռալին, գիշերային յարձակումը... պիտի կազմեն համն ու հոտը այս բանակումին, ուր ճակատումները կ'ըլլան ոչ-դիւրին, բայց՝ յաղթահարելի:

Յոգնած, սպառած սակայն հպարտօրէն իրենց ծնողները դիմաւորող սկաուտներուն դիմագիծերը կը փոխանցեն բանակումին յաջողութիւնը, ու իր ճշգրտած նպատակներու իրագործումը՝ պատասխանատուութեան եւ պարտականութեան գիտակցութիւն, նաեւ՝ համերաշխութեան ոգիի զարգացում:

Կիրակի, 10 Յուլիսի «Այցելութեան



օր» ունենալով, ծնողները առիթը ունեցան ծանօթանալու բանակումի աշխատանքներուն, «Ժամպվիլի» բանակավայրին, գեղատեսիլ, անտառային բնոյթով Ֆրանսական սկաուտական բանակավայրին (Թէեւ շատերուն համար արդէն ծանօթ):

Օրուան պաշտօնական բաժինը կ'ընդգրկէր սկաուտական տողանցք, դերօջակի արարողութիւն, կարգերու եւ գնահատականներու տուչութիւն:

Բանակումի խմբապետուհի քոյր կարինէ Սիսեռեան փոխանցեց խմբապետութեան խօսքը, շեշտը դնելով ըսկաուտութեան առաքինութիւններուն վրայ:

Իսկ վարչութեան խօսքը փոխանցելու հրահրողեցաւ վարչութեան ատենապետ եղբ. Լեւոն Պաղտասարեան: Ան մատանչեց, թէ՛ «այս հաւաքը կը նըկատուի Հ.Մ.Ը.Մ-ի ամէնէն սիրելի հանդիպումներէն մէկը, որովհետեւ ան կը հանդիսանայ միութեան ամէնէն փոքր տարիքի անդամներուն հետ զուարճանալու պահը»:

Եղբ. Պաղտասարեան աւելցուց, թէ



«Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը, մասնաճիւղին հիմնադրութենէն ի վեր, 27րդ տարին ըլլալով, անխափանօրէն կը յաջողցնէ սկաուտական բանակումներ, քաջ գիտնալով անոնց բերած նըպաստը պատանիներու հոգիին մէջ, ըլլայ ան մարդկային առումով, թէ՛ ազգային»:

Աւարտին եղբ. Պաղտասարեան յայտնեց, որ «այսօր, այս շքեղ հաւաքը ունի տարբեր փայլք մը եւս, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի տակաւին պատանի մասնաճիւղը, իր հիմնադրութենէն ոչ շատ ուշ կազմեց նաեւ իր շեփորախումբը, որուն 20ամեակը կը տօնախմբենք


միասնաբար: Նոյն գիտակցութեամբ էր, որ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի յաջորդական վարչութիւնները, ամէն գոհողութեան գնով, փորձեցին ամուր պահել սկաուտութեան տարբեր գոյն փոխանցող շեփորախումբը, իր ուսուցիչին Եզուարդ Բարսեղեանի խմբավարութեամբ»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը յուշանուէր մը փոխանցեց ուսուցիչին: Այնուհետեւ շեփորախումբը ներկայացուց կոկիկ յայտագիր մը, նուիրուած 20ամեակին:

Այո՛, բանակումը կարեւոր է:

Սկաուտութեան նպատակները կարենալ կատարելագործելու համար, առօրեայի մէջ սորվածը գործնականացնելու լաւագոյն միջոցը բանակումն է, ուր հեռու իրենց բնական ու ընտանի վայրերէն, փոքրերը կը թրծուին եւ կը կոփուին, գործնականի կը վերածեն զուտ բառային արժէք ներկայացնող տեսութիւնները:

Այս առումով կարեւոր է գնահատել բանակումներու դերը, որ ամբողջացում կը թելադրէ սկսուած գործին:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

**Yerevan**  
32-38, Hanrabadoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europelhotel.am

Studio/ICEH 2005/APS



# Հ.Մ.Ը.Մ. ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԱԲԵՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ՆՇԱՆԱԶԳՈՒԹԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

## Թղթակից ԳԱՅԻՐԷ

**Հ**ՄԸՄ-ական եղբայրներ Հէրի Գազանճեան (Գահիրէի ՀՄԸՄ-«Արարատ»ի անդամ) եւ Արա Միսքճեան (Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ-«Կամք»ի պասքեթպոլի նախկին մարզիկ), անցնող Մայիսին, պատուաբեր յաջողութիւն մը արձանագրեցին նշանաձգութեան Եւրոպայի ախոյեանութեան մրցումներուն:

Եգիպտոսի ազգային եռանդամ խումբին հետ, եղբայրները գրաւեցին ախոյեանութեան երրորդ դիրքը, Փորթուգալի եւ Իտալիոյ ազգային խումբերուն ետին:

Յայտնենք, որ ախոյեանութիւնը տեղի ունեցաւ 21-22 Մայիս 2011ին, Իտալիոյ Պոլոնիա քաղաքին մէջ:



## ՃՇՌՈՒՄ

### «ՄԿԱՈՒՏ ԵՂԱՅ»

«Մարզիկ»ի թիւ 341ի «Սկաուտ եղայ» յօդուածին հետ (ԻԹ. տարի, թիւ 11, էջ 18-19) ներկայացուած էր խմբանկար մը, որուն բացատրութեան մէջ տեղ գտած էր վրիպակ մը: Ամմանէն եղբ. ձորճ Տաքէսեան, իբրեւ խմբանկարի մասնակից, կը կատարէ հետեւեալ ճշդումը:

«Նկարը կը ներկայացնէ ՀՄԸՄ-ի Երուսաղէմի սկաուտները 1940ին:

«Առաջին շարք, ձախէն աջ գետին նստած են ձորճ Տաքէսեան, Միսաք Միսիսիւեան, Հրայր Երկաթեան, Վահրիճ Մարգարեան եւ Լեւոն Շէօճմէլեան:

«Երկրորդ շարք, ձախէն աջ նստած են Վարդգէս Թոմպալաքեան, Յակոբ Թոմպալաքեան, Լեւոն Երկաթեան, սկաուտապետ Կարօ Մարտիրոսեան, Աբգար Լուսարարեան եւ Գէորգ Սեւան:

«Ուրի, առաջին շարք, ձախէն աջ Յովհաննէս Քէօրքիւնեան, Անդրանիկ Մամուլեան, Կարպիս Սէմէրճեան, Արշակ Ուրֆալեան, Յարութ Շըքլանեան, Խաչիկ Պաղպուտարեան եւ Հրանդ Թաչճեան:

«Ուրի, երկրորդ շարք, ձախէն աջ Քէօրքիւնեան, Թէքէեան, Յարութիւն Տէօքմէճեան, Ժպտունի, Մանուէլեան, Սարգիս Սերայտարեան եւ Յակոբ Կիւլոյեան»:



# ԵՂԲ. ՊԵՏԻԿ ԻՆՃԷԿՏԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Լեւոն Թաշճեան  
ԱՅՆՃԱՐ

**Ե**ղբ. Պետիկ Ինճէեան փոքր տարիքին մուտք գործած է Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիք՝ որպէս գայլիկ, ապա՝ սկառուտ: Ան եղած է գործօն անդամ ու մեծ եռանդով վարած է բանակումներ, արշաւներ եւ ձիւնագնացութիւններ: Արշաւներու ընթացքին, կէս գիշերին, ան սկառուտները կը մղէր գետին մէջ լողալու եւ լեռ մագլցելու: Այս արշաւներուն ու բանակումներուն ատեն երեւան կ'ելլէր եղբայր Պետիկի եղբայրասիրութիւնը, համեստութիւնն ու նուիրումը, որոնք վարակիչ դարձան սկառուտներուն համար: Ան ունէր բացառիկ կարողութիւն՝ պատրաստելու չարքաշ ու տիպար սկառուտներ: Անոր արշաւները կը սկսէին «արշաւենք դէպի Արարատ» կանչով:

Եղբայր Պետիկ Ինճէեան իր բարի նկարագրով դաստիարակեց սկառուտներու փաղանգ մը՝ որպէս հայրենասէր արիւնք, որոնք դարձան «Բարձրացիր՝ բարձրացուր» նշանաբանով Հ.Մ.Ը.Մ.ականներ: Ան տիպար սկառուտներ մարզելու ընդմէջէն կը ցոլացնէր իր ազգանուէր ոգին:

Եղբայր Պետիկ Ինճէեան սկառուտական կեանքին մէջ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի խմբապետ, ըսկառուտ. Խորհուրդի եւ վարչութեան անդամ:

Եղբայր Պետիկ Ինճէեան մեծ սէր ունէր Ֆուլթայլի հանդէպ: Ան կազմեց ըսկառուտական Ֆուլթայլի խումբ մը եւ մեծ նուիրումով մարզեց զայն: Ապա եղաւ Այնճարի մասնաճիւղի Ա. խումբին մարզիչն ու խմբապետը: Այնճարի Ֆուլթայլի խումբը կը մասնակցէր միջմասնաճիւղային Ֆուլթայլի խաղերուն: 1973ին, Պեքալայի խաղերուն, Այնճարի Ֆուլթայլի խումբը կը շահի առաջնութիւն՝ եղբայր Պետիկի ջանքերով, նաեւ



կը մասնակցի Հայէպի մէջ կայացած մըրցումներուն:

1974ին, եղբայր Պետիկ Ինճէեան Հ.Մ.Ը.Մ.ի չըջանային ներկայացուցչական Ֆուլթայլի խումբ կը հրաւիրուի որպէս մարզիկ:

Իր նախասիրութիւնն էր նաեւ ձի հեծնել: Ան ունէր ձիեր, զորս կը խնամէր մեծ սիրով:

Եղբայր Պետիկ Ինճէեան մէկն է այն տիպար Հ.Մ.Ը.Մ.ականներէն, որոնք կրնան օրինակ հանդիսանալ ապագայ սերունդներուն, իբրեւ իսկական հայ արի: Ան Հ.Մ.Ը.Մ.ի ոգիով ու Դաշնակցութեան գաղափարով նահատակուեցաւ 1976 Մայիս 27ին, յանուն 1.5 միլիոն հայ զոհերու դատին ու հայրենի հողերու ազատագրման:

Սիրելի եղբայր Պետիկ, յիշատակդ անթառամ պիտի մնայ ու յաւերժ պիտի ապրի Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին մէջ:



# ԵՂԲ. ՏԻԳՐԱՆ ՆՈՒՊԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր մը  
ՊԵՅՐՈՒԹ**



Ճիւղի ֆուլթայոյի խումբի խմբապետ, ապա՝ երկար տարիներու մարզիչ:

Ֆուլթայոյի ասպարէզէն հեռանալէ ետք նոյնիսկ եղբ. Տիգրան մօտ մնաց անոր: Ան կը պատրաստուէր քանի մը շաբաթ ետք մասնակցելու Հ.Մ.Ը.Մ.ի վեթերան ֆուլթայոյիստներու մրցումին, երբ պատահեցաւ չսպասուածը... Սեւ ճակատազիրը արդեւ եղաւ ֆուլթայոյի դաշտին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի տարագով կրկին մրցելու, եւ մահը չարտօնեց, որ նուիրեալ եղբայրը այդ երջանկութիւնը ապրի: Ափսո՛ս, հազա՛ր ափսոս...  
Եղբ. Տիգրան իր կեանքին երիտասարդ տարիները տրամադրեց իր միութեան ֆուլթայոյի խումբին եւ նոյնիսկ կեանքին վերջին օրը անցուց Հ.Մ.Ը.Մ.ի նորակերտ դաշտին վրայ: Անոր յիշատակը վառ պիտի մնայ բոլորին մօտ, իբրեւ հեզ ու ազնիւ եղբայր, հաւատարիմ միութենական: Ան օրինակ պիտի ըլլայ նորահաս սերունդի մարզիկներուն, իբրեւ տիպար ֆուլթայոյիստ, նուիրեալ ու ծառայասէր Հ.Մ.Ը.Մ.ական:

Մահանալն ալ ունի ձեւ ու ոճ...  
Կիրակի, 8 Մայիս 2011ին, ճակատազիրի մէկ անհամ խաղին զոհը գնաց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆուլթայոյի խումբի վեթերան մարզիկներէն եղբ. Տիգրան Նուպարեանը:

Ան մահացաւ իր սիրած մարզախաղը՝ ֆուլթայոյը կիրարկած միջոցին, Հ.Մ.Ը.Մ.ի «Պօղոս Արիս» դաշտին վրայ:

Ցաւեցան բոլոր անոնք, որոնք մօտէն ճանչցան եղբայր Տիգրանը իբրեւ ընկեր, ծանօթ, բարեկամ թէ մարզիկ:

Ցաւեցան նաեւ բոլոր անոնք, որոնք չէին ճանչցած եղբայր Տիգրանը, որովհետեւ նախկին մարզիկը կը մահանար հոն՝ ֆուլթայոյի դաշտին վրայ, զոր սիրած էր խենթի մը պէս, եւ տարիներ քրտինք թափած էր հոն՝ իր պաշտած դեղին շապիկով եւ Եռագոյն տարագով, բարձր պահելով միութեան դրօշն ու պատիւը, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնա-

տարիները տրամադրեց իր միութեան ֆուլթայոյի խումբին եւ նոյնիսկ կեանքին վերջին օրը անցուց Հ.Մ.Ը.Մ.ի նորակերտ դաշտին վրայ: Անոր յիշատակը վառ պիտի մնայ բոլորին մօտ, իբրեւ հեզ ու ազնիւ եղբայր, հաւատարիմ միութենական: Ան օրինակ պիտի ըլլայ նորահաս սերունդի մարզիկներուն, իբրեւ տիպար ֆուլթայոյիստ, նուիրեալ ու ծառայասէր Հ.Մ.Ը.Մ.ական:

Հողը թեթեւ գայ վրադ եղբ. Տիգրան:

# ԵՂԲ. ՊՕՂՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը եւ Լիբանանի փինկ-փոնկի ֆետերասիօնը Յունիսին գուժեցին մահը փինկ-փոնկի վաստակաւոր մարզիկ ու մարզիչ եղբ. Պօղոս Յովհաննէսեանին, որ 84 տարեկանին

իր մահկանացուն կնքեց Լիոնի մէջ, Ֆրանսա:

Ո՞վ էր եղբ. Յովհաննէսեան, որուն համեմատաբար ծանօթ չէ նոր սերունդը:

Եղբ. Պօղոս Յովհաննէսեան ծնած է 4 Մարտ 1927ին, Պէյրութ: Նախնական կրթութիւնը կը ստանայ Ազգային Ս. Նշան վարժարանի եւ Ճեմարանի մէջ, առանց սակայն աւարտելու անոր բարձրագոյն կրթութեան ծրագիրը:

Պատանի տարիքէն եղբ. Պօղոս կը նետուի կեանքի ասպարէզ եւ երկար տարիներ կ'աշխատի լուծարարի:

Հ.Մ.Ը.Մ. մուտք կը գործէ 1938ին, իբրեւ Պէյրութի մասնաճիւղի գայիկ, ապա մաս կը կազմէ միութեան մարզական կեանքին, կարճ ատեն մը միաժամանակ կիրարկելով ֆուլթայոյ, պասքէթ եւ փինկ-փոնկ:

1947էն սկսեալ, եղբ. Պօղոս ամբողջութեամբ կը նուիրուի փինկ-փոնկի մարզախաղին եւ 1948-1953 իր մասնակցութիւնը

## ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գուժէ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական, Լիբանանի փինկ-փոնկի առաջին ֆետերասիօնի անդամներէն եւ Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի խումբի երկար տարիներու մարզիչ՝

### ԵՂԲ. ՊՕՂՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 9 Յունիս 2011ին, Ֆրանսայի մէջ:

կը բերէ փինկ-փոնկի Լիբանանի զոյգերու ախոյեանութեան մրցաշարքերուն:

1953ին, եղբ. Պօղոս Յովհաննէսեան կը նշանակուի Հ.Մ.-Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի փինկ-փոնկի մարզիչ եւ մինչեւ Լիբանանէն վերջնական մեկնումը՝ 1978, շուրջ քառորդ դար, ձեռնհասութեամբ կը վարէ իր պաշտօնը, ապահովելով ախոյեանական բազմաթիւ տիտղոսներ եւ պատրաստելով փինկ-փոնկի երիտասարդ, փայլուն մարզիկներ (Րաֆֆի Մունջօղլեան, Մորիս Հաժ Նիքոլա...):

1957-1964 եղբ. Պօղոս կը ստանձնէ նաեւ փինկ-փոնկի Լիբանանի ազգային խումբին մարզումը: Անոր հսկողութեամբ, Լիբանանի ազգային խումբը պատուաբեր արդիւնքներ կ'արձանագրէ միջ-արաբական, Միջերկրականեան եւ աշխարհի ախոյեանութեան Միւնիխի, Սարաեւոյի, Փեքինի, Թոքիոյի եւ Ռիատի մրցաշարքերուն:

1966էն սկսեալ, Հ.Մ.-Ը.Մ.ի փինկ-փոնկի պատասխանատուներու ջանքերով, եղբ. Պօղոս կը ձեռնարկէ փինկ-փոնկի միջ-զպրոցական մրցաշարքերու կազմակերպման:

1978ին, Ֆրանսա հաստատուելէ ետք, շրջան մը ան կը մարզէ փինկ-փոնկի Ֆրանսական խումբեր:

## ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ...

(Շարունակուած 10րդ էջէն)

Վարչութիւնը, յետ մրցումներուն, շնորհակալութեան նամակ կը գրէ Պէյլէրեան եղբայրներուն՝ իրենց տրամադրած բաժակին ու Միհրան Թուրիկեանին՝ իր ցոյց տուած բարեացակամութեան համար:

Մրցումներուն նախօրեակին տեղի կ'ունենայ Սուրիոյ եւ Մեծն Լիբանանի Հ.Մ.-Ը.Մ.ի առաջին Պատգամաւորական ժողովը, 31 Մարտ 1929ին, Պէյրուսի մէջ:

Մասնաճիւղերէն Հայէպ, Դամասկոս, Պէյրուս, Չահլէ եւ Պապատա իրենց պատգամաւորներով ներկայ էին: Թրիփոլի մասնաճիւղը պատգամաւոր նշանակած էր Յովհաննէս Շահինեանը: Ահա ժողովին լրիւ պատկերը.-

Դիւան.- նախագահ Գրիգոր Գարայեան, ատենադպիր Միհրան Կարապետեան:

Հ.Մ.-Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնադրի շրջաններ հատուածի 38րդ յօդուածին տրամադրութեան համաձայն՝

Հայէպ- երեք պատգամաւոր՝ Սուրէն Քալենտէր, Լուտեր Մասպանաճեան եւ Միհրան Կարապետեան:

Դամասկոս երկու պատգամաւոր՝ Յովհաննէս Պոյաճեան եւ Յարութիւն Թահմազեան:

(Շար. 26)

[www.homenetmenlebanon.com](http://www.homenetmenlebanon.com)

*'Made from one single slice of natural Australian opal'*

# Classique®

OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.*  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia

Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)

# ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂՁԸ

**Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան  
ՊԵՅՐՈՒԹ**

**Ա**րտաշատ մայրաքաղաքի հիմնադրման օրն էր: Հայոց Արտաշէս թագա-  
ւորը կը հիւրընկալէր Կարթագէնի զօրավար Հանիպալը, որուն խոր-  
հուրդով հիմնած էր իր մայրաքաղաքը:

Պարիսպի կառուցման փոսին մէջ թագաւորը մարգարիտներ նետեց, յետոյ  
բերին հայկական հին մասունքներ, որոնցմով, ըստ աւանդութեան, պէտք է  
ամրապնդուէին քաղաքին պատերը: Անոնց մէջ Հանիպալ նշմարեց կարմիր  
գոյնի ուլունք մը:

- Ասիկա տաշուած է դեղձի կորիզէն,- ըսաւ Հանիպալ,- ձեր նախնիները  
անշուշտ Պարսկաստանէն բերած են:

- Ինչո՞ւ Պարսկաստանէն, չինացիներն ալ դեղձ ունին, բայց դեղձը նաեւ  
հայկական պտուղ է: Հայաստանէն է, որ դեղձը տարած են Պարսկաստան:

«Ո՛չ հայը իր դեղձենին կը զարնէ, ոչ ալ պարսիկը՝ իր դստերը»: Ասիկա պարս-  
կական առած է: Դեղձենի ունեցող պարսիկը նման խօսք չ'ըսեր,- կը պատասխանէ Արտաշէս: Երբ հայկական  
դեղձը Եւրոպա կը տարուէր, - կը շարունակէ Արտաշէս,- Հայաստանը Պարսկաստանի գերիշխանութեան տակ էր  
ու դեղձ ծախողները զայն կը ներկայացնէին իբրեւ պարսկական:

- Ափսո՛ս,- կ'ըսէ Հանիպալ,- դեղձուտները Հայաստան ըլլան, իսկ դեղձին «պերսիկ» ըսեն, անարդար է:



# ԴԵՂՁԵՆԻՆ

**Դ**եղձենին պտղատու ծառ մըն է: Կ'են-  
թաղրուի, որ ծագումով ան չինական  
բոյս մը եղած է: Շատ հին ժամանակ ու-  
ղեւորներ զայն բերած են Մերձաւոր  
Արեւելք, Պարսկաստան եւ հոնկէ ան-  
ցած է Եւրոպա: Եւրոպացիները շատ սիրեցին «պարս-  
կական սալորը», ինչպէս կոչեցին զայն, կարծելով, որ

անոր հայրենիքը  
Պարսկաստանն  
է: Հետագային  
պարզուեցաւ, որ  
ան պարսկական  
չէ, բայց եւ այն-  
պէս գիտական  
անուանումը մը-  
նաց անփոփոխ՝  
«պերսիկ»: Հա-  
յաստանի մէջ հի-

նէն տարած-  
ւած ծառե-  
րէն է դեղ-  
ձենին:

Դեղձե-  
նին 3-5 մե-  
թր, երբեմն  
մինչեւ 8 մե-  
թր բարձրութեամբ ծառ մըն է: Տերեւները երկարա-  
ւուն-նշտարածեւ են: Ան կ'ապրի 10-15 տարի: Պտուղնե-  
րը կը հասունանան Մայիսէն մինչեւ Նոյեմբեր: Պտուղնե-  
րը կ'օգտագործուին թարմ եւ պահածոյ ձեւով (չիր,  
հիւթ, անոյշ):

Ան կ'աճի փխրուն հողի մէջ, առատ խոնաւութեան  
եւ ջերմութեան պայմաններու մէջ: Դեղձենին ծիրա-  
նենին նման զգայուն է ցրտահարութիւններու նկատ-  
մամբ:

Կը բազմանայ սերմերով եւ պատուաստի միջոցով:







# ԿԵՆՆՈՒՄ ՅԵՂՈՒԿԸ

**Ե**րկրագունդի մակերեսով լցված առաջին շատ ջրային է, քան՝ ցամաքային: Անոր 70 առ հարիւրը ջուր է: Երկրագունդի մեծագոյն գաղտնիքը կենդանական աշխարհի գոյութիւնն է:

Ապրող էակներու մարմինն մեծ մասը կազմուած է ջուրէն: Առանց ջուրի կեանքը պատկերացնել կարելի չէ: Մարդ առանց սնունդի կրնայ ապրիլ մէկ ամիսէն աւելի, իսկ առանց ջուրի՝ հազիւ 5-6 օր:

Բացի կենսական պահանջներէ, մարդը ջուրի անհրաժեշտութիւն ունի իր կենցաղին մէջ՝ կերակուր պատրաստելու, հագուստ լուարու եւ այլնի համար:

Բայց ամէն տեսակ ջուր խմելու յարմար չէ: Ամէնէն ապահովը ստորերկրեայ ջուրերն են, որոնք մանրէներ չեն պարունակեր: Այդ ջուրերը մաքրուելու կարիք գրեթէ չունին: Հոչակաւոր են հայկական լեռնաշխարհի հրաբխային լեռներէն բխող ջուրերը:

Հիւանդութիւնները եւ համաճարակները կանխելու համար խմելու ջուրը կը հականեխեն:

Ջուրը անհրաժեշտ է մարդու առողջութեան պահպանման համար: Հարկ է տեսաբար լողնալ: Մաքուր մարմինը կը յաղթահարէ բոլոր տեսակի հիւանդութիւններ եւ կը բարձրացնէ մարդոց ֆիզիքական ու մտաւոր կարողութիւնները:

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՒՅՆԵՐՈՒ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԸ

**Բ**ոլորիս ծանօթ են երաժշտական եօթը նոթաները: Իսկ գիտէք, թէ ո՞վ առաջին անգամ գործածած է զանոնք եւ ի՞նչ կը նշանակեն արդեօք: Վենետիկցի քահանայ Կուրտո ա՛ Արեցցոն է, որ առաջին անգամ կը գործածէ այս անուանումները: Անոնք Յովհաննէս Մկրտիչին ուղղուած աղօթքի բառերու առաջին վանկերն են: Ահա այսպէս՝

Ut queant laxis  
Resonare fibris,  
Mira gestorum  
Famuli tuorum,  
Solve polluti  
Labbii reatum,  
Sancte Iohannes

Կը թարգմանուի այսպէս. «Տուր մեզ անաղարտ շուրթեր, Սուրբ Յով-



հաննէս, որպէսզի կարենանք մեր ձայնի ողջ զօրութեամբ վկայել քու հրաշագործութիւններուդ մասին»:

Վերջին «Մի» նոթը Սուրբ Յովհաննէսի անուան սկզբնատառերն են (Sancte Iohannes): 17րդ դարուն «ուրթ» նոթան (չարքին առաջինը) փոխարինուած է աւելի բարեհունչ «տո»յով:



### ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:  
Ունիմ սուր-սուր  
ակուաներ, բայց մա-  
զեր չեմ փետեր:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր խնձոր):



## Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

## ՍՈՒՏՈՔՈՒ

		1		6		3		
	7			5			8	
8			7		1			6
		6	3		5	1		
2	1			9			3	4
		9	1		2	8		
1			9		4			3
	5			1			2	
		2		7		4		

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուեմով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

### Նախորդին լուծումը


7	5	9	1	4	2	8	6	3
4	3	2	5	6	8	7	9	1
6	1	8	3	9	7	4	2	5
3	7	1	2	8	5	9	4	6
8	9	4	6	1	3	5	7	2
2	6	5	9	7	4	1	3	8
9	4	3	8	5	6	2	1	7
5	2	7	4	3	1	6	8	9
1	8	6	7	2	9	3	5	4

Պատասխանը՝ յաջորդիւ

### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- «Էն. Պի. էյ.»ի կազմերէն:
- Եկեղեցի - Հռոմի Բ. եռապետութեան անդամներէն:
- Ելեկտրականութեան միաւոր - Նաթիւրալիստ:
- Գոյնզգոյն նուրբ թիթեղներէ կտրուած բոլորակ հատեր - Մանօթ:
- Բոհրած ալիւրով ապուր - Դանդաղ:
- Հոգածութիւն - Սարսափ - Արական օտար անուն:
- Ափրիկեան երկիր - Իգական անուն:
- Համադասական շաղկապ - Փքին:
- Վասակ Սիւնիի որդիներէն - Անձնական դերանուն:
- Հորովակերտ մասնիկ - Չքամուած մեղր - Ձայնակից տառեր:
- Եւրոպական թագաւորութիւն - Եւրոպական հանրապետութիւն:
- Անպատկառ - Դուրս դալու միջոց:
- Սպաներէն՝ դետ - Այբուբենէն - Լծկան կենդանի:
- Չաստուածներ - Օգոտ - Պրագիլցի նախկին ֆուլթպոլիստ:
- Հարցական դերանուն - Արական անուն - Տարածքի միաւոր:
- Խոթոռ - Բուսնիլ - Սկառու:
- Առաւօտեան ցօղ - Որովհետեւ - Հոգեգալակ:
- Որձ - Էական բայ - Իրաքեան լրատու գործակալութիւն:
- Առօրեայ սնունդ - Եւրոպական թագաւորութիւն - Պատշաճ:
- Մեղկանալ - Հնոցէն հրաշէկ իրեր հանելու աքցան:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Մուխ արձակել - Ընդեղէն մը - Աղօրիքի ձագար - Եղանակաւորիչ մակբայ:
- Իգական օտար անուն - Ամօթ - Մովեզերեայ չըջան՝ Ֆրանսայի եւ Իտալիոյ միջեւ:
- Շան ձագ - Իրանահայ օրաթերթ - Մշտադալար կաղնի:
- 2010-ի ֆուլթպոլի լաւագոյն մարզիչը՝ ըստ «ՅԻՅԱ»-ի - Անասունի մագ:
- Մովային - Առարկայ - Այբուբենէն - Տառի մը անունը:
- Իգական օտար անուն - Ճատրակի հայրենի վարպետ:
- Թէոդիկի ստորագրութիւններէն - Յօժար - Սպասէ՛:
- Ժամանում - Բուրդ - Լծորդութիւն:
- Մնողագուրկ - Չին թենիսիումըն:
- Աստուածային - Թեթեւակի դաչի - Իրերայաջորդ գիրեր:
- Տոպրակ - Եկամուտ - Դատարան - Բոսոր:
- Ախտաժամ - Իրաւագրիկ - Դրկից տառեր:
- Ղագարապատ գիւղի արդի անունը - Երեսի վրայ թողուլ - Յուցական դերանուն:
- Գետ մը՝ Գանատայի եւ Մոնթանայի մէջ - Կողմ - Հեղուկ գտելու վայր:
- Օգնական - Դրդող ազդակ - Յարացոյց:



Հ.Մ.Ը.Մ.-ՑԻԱՆՍԻ  
ՉԵՐԿՔԱՆՈՒՄ

